Azg
Ազգ
19 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2007 ՈՒՐԲԱԹ 191 (3843)

Իրանի խորհրդարանն ընդդեմ 106-րդ բանաձեւի

Իրանի խորհրդարանի նախագահ Հադադ Ադելը հանդես է եկել ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի լիագումար նիստում քվեարկության դրվելիք հայկական օրինագծի քննադատությամբ: Ինչպես հաղորդում է «Մարմարան», Ադելի տարածած հաղորդագրությունում, որը պետք է ուղարկվի ԻԻՀ ԱԳ նախարարություն, ընդգծվում է, որ Իրանը այդ հարցում զորակցում է Թուրքիային:

Նավթավերամշակման գործարան Մեղրիում

Էներգետիկայի նախարար Արմեն Մովսիսյանը հայտարարել է, որ նոյեմբերին կավարտվի Մեղրիում նավթավերամշակման գործարանի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման փաստաթղթերի նախապատրաստումը: Նրա խոսքերով, փաստաթղթի պատրաստումից հետո սկսվելու են նախագծային աշխատանքները: Խոսքը 7 մլն տոննա տարեկան հզորության, մոտ 1.7 մլրդ. դոլար արժողության գործարանի կառուցման մասին է, որը տեղակայված կլինի հայ-իրանական սահմանին:

Երեւանը կունենա ընտրովի քաղաքապետ եւ նրա կողմից նշանակվող տարածքային ղեկավարներ

Կառավարության հաստատած փաստաթղթով, քաղաքապետին կընտրի քաղաքային ավագանին

ԱԲՈՒ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Երեւանի կարգավիճակի օրենքը, որի մասին այդքան խոսվում էր սահմանադրական հանրաքվեից առաջ եւ հետո, երեկ հաստատվեց կառավարության կողմից եւ որպես անհետաձգելի օրինագիծ ուղարկվեց Ազգային Ժողովի քննարկմանը: Համաձայն այդ փաստաթղթի, որի ամբողջական անվանումն է «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման եւ տարածքային կառավարման մասին», Երեւանի քաղաքապետը կընտրվի անուղղակի ընտրությամբ՝ քաղաքային ավագանու կողմից: Այդ մասին օրինագիծը լրագրողներին ներկայացնելիս հայտնեց արդարադատության նախարար **Գեւորգ Դանիելյանը**:

Ինչպես հայտնի է, սահմանադրության նոր տարբերակով Երեւանի կարգավիճակն արդեն իսկ սահմանվել էր որպես համայնք, բայց քաղաքապետի ուղղակի կամ անուղղակի ընտրության հարցը չէր պարտադրվել: Ըստ արդարադատության նախարարի, ուղղակի ընտրվող քաղաքապետը նախատեսում է



ավելի լայն լիազորություններ, քան անուղղակի ընտրվողը: Այդ պատճառով էլ նախապատվությունը տրվել է այդ տարբերակին, որը, Գեւորգ Դանիելյանի հավաստմամբ, գերակշռում է Արեւմտյան Եվրոպայի երկրներում, մասնավորապես Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում: Քաղաքի ավագանու կողմից ընտրվող քաղաքապետը միաժամանակ համարվում է տեղական ինքնակառավարման մարմին եւ տարածքային կառավարման մարմին, հաշվետու է ավագանու, նաեւ կառավարության առջեւ:

Տես էջ 2

ԹԻՎ 106 ԲԱՆԱՁԵՎԻ ՀՈՎԱՆԱՎՈՐԵՐԻ ԿՈՉԸ

Հայոց ցեղասպանության ճանաչմամբ ԱՄՆ-ը կմնա աշխարհում բարոյական առաջնորդ

«Այսօր Կոնգրեսը իրավամբ պարգեւատրեց Դալայ -Լամային Կոնգրեսի Ոսկե մեդալով՝ չնայած Չինաստանի կառավարության առարկություններին», հոկտեմբերի 17-ին նման հայտարարություն են տարածել հայկական հարցերով կոնգրեսական համախմբման անդամները, Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւը հովանավորողներ Ադամ Շիֆն ու Ջորջ Ռադանովիչը, Ֆրենկ Փալոնը, Ջո Նոլեմբերգը եւ ուրիշներ: Ադամ Շիֆի մամուլի ծառայության համաձայն, հայտարարության մեջ նշվում է, որ Դալայ-Լամային պարգեւատրելը բարոյականության հաղթանակ է՝ առանց հաշվի առնելու մեկ այլ ազգի սպառնալիքները:

Լամային Ոսկե մեդալով պարգեւատրելով Կոնգրեսը, համաձայն հայտարարության, ցույց տվեց իր մասնակցությունը աշխարհում խաղաղությանն աջակցելու գործին: Այնուհետեւ կոնգրեսականներն ընդգծում են, որ այսօրինակ մոտեցում որդեգրած Մ. Նահանգները պետք է նույնօրինակ կամք դրսեւորի խոսելու Հայոց ցեղասպանության մասին: «Եթե մենք որպես ազգ պետք է լինենք աշխարհում բարոյական առաջնորդ, պետք է քաջություն ունենանք ճանաչելու ցեղասպանությունը՝ որտեղ եւ երբ էլ այն պատահի»: Հայտարարության աջակիցները ընդգծել են 1915-23 թթ. մեկուկես միլիոն հայերի սպանության ճանաչման կարեւորությունը:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայ առաքելական եւ Ռուս ուղղափառ եկեղեցիների երկխոսության երկրորդ փուլը կմեկնարկի

Վեց տարի առաջ Ամենայն հայոց կաթողիկոսի եւ Համայն Ռուսիո պատրիարքի նախաձեռնությամբ սկսված երկխոսության շրջանակում Մայր աթոռ Ս. Էջմիածնում հանդիպել են Ռուս ուղղափառ եւ Հայ առաքելական եկեղեցիների ներկայացուցիչներն ու քննարկել եկեղեցի-հասարակություն փոխհարաբերությունների մի շարք հարցեր: Այդ շարքի հանդիպումներից հաջորդը կայացել է հոկտեմբերի 15-ին Մոսկվայում: Քննարկվել են երկու եկեղեցիների երկխոսության երկրորդ շրջանի օրակարգի եւ ժամկետներին վերաբերող հարցեր: Եզնիկ սրբազանն ու Կիրիլ մետրոպոլիտը, անհրաժեշտ համարելով սկսված երկխոսության շարունակությունը, մի շարք հանդիպումներ են նախատեսում 2008 թվականին:

Հայաստան կժամանի Հունաստանի պաշտպանության շտաբի պետը

ՀՀ գլխավոր շտաբի պետ Սեյրան Օհանյանի հրավերով հոկտեմբերի 22-ին Երեւան է ժամանելու Հունաստանի ազգային պաշտպանության գլխավոր շտաբի պետ Դիմիտրիոս Ղռափսասի գլխավորած պատվիրակությունը: Հայ պաշտոնակցի հետ հանդիպում է նախատեսված, ծրագրված է այց Ծիծեռնակաբերդ, իսկ այցի ավարտին կողմերը ստորագրելու են ռազմական համագործակցության 2008 թվականի ծրագիրը:

Երեւանում է Մարսելի քաղաքապետը

Երեկ Հայաստան է ժամանել Մարսելի քաղաքապետ, սենատոր Ժան-Կլոդ Գոդենը: Նա հանդիպումներ կունենա ԱԺ նախագահի, հայ-ֆրանսիական բարեկամության խմբի անդամների հետ: Երեւանի քաղաքապետի հետ հանդիպմանը կողմերը կստորագրեն համագործակցության համաձայնագիր:

Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

«Անտիպ էջեր» խորագրի ներքո շարունակում ենք Լեռ Կամսարի հրապարակումները. այս անգամ՝ նրա դիմում-բողոքները խորհրդահայ իշխանավորներին: Տաղանդավոր երգիծաբանի գրիչը, ինչպես միշտ, բարձունքում է՝ իր ցնցող դրամատիզմով:

Երեւանում լույս տեսած Վահագն Գրիգորյանի «Առաջնորդի կյանքն ու մահը» գրքին է անդրադառնում Յուրի Խաչատրյանի «Լուսնի հակառակ երեսը կամ Փանջունիների պսակազերծումը՝ դառնությամբ եւ զավեշտով» հոդվածը: Գրքում երգիծվում են ժամանակակից հայ քաղաքական կյանքի ու մտքի դրսեւորումներ նրա բազմաբնակ կուսակցություններն ու դրանց առաջնորդները:

«Սասնա Ծռեր» էպոսի անհայտ շերտեր է բացում Լոս Անջելեսում լույս տեսած «Հնագույն հեթանոսական Աստվածաշունչ Սասնա Ծռեր էպոսը» գիրքը: Էպոսի շատ անձնանունների, տեղանունների, թվերի ու բառերի կոդագերծմամբ հեղինակը՝ Արթուր Արմինը զուգադրումներ է կատարում աստղագիտական մի շարք երեւույթների հետ: Այս մասին՝ նրա հետ Մելանյա Բաղալյանի զրույցում:

Թուրք կին լրագրող Էլիֆ Շաֆակի մասին է Հակոբ Ծուլիկյանի ներկայացնող նյութը՝ հրապարակված «Ինդիփենդենթ» թերթում:

«Մի վախեցիր» հեռուստատեսային ֆիլմաշարին է անդրադառնում Ալեքսանդր Թոփչյանը:

Հրապարակում ենք ֆրանսահայ քանդակագործ Զավեն Խաչատրյանի 75-ամյակին նվիրված Հարություն Թոքսյանի հոդվածը:

Վերջերս Երեւանում անցկացվեց «Հայ-ֆեստ» թատերավեստի 5-րդ խաղաշրջանը: Նորարարական թատերավեստի երեւանյան արձագանքին է անդրադառնում Լարիսա Թոփչյանը:

Թուրքիայում ձերբակալվել է ՀՀ մեկ քաղաքացի

Միջազգային լրատվամիջոցների տարածած տեղեկության համաձայն, Թուրքիայում ձերբակալվել էին ՀՀ քաղաքացիներ: Այս առնչությամբ «Ազատություն» ռադիոկայանի հարցին ի պատասխան ՀՀ ԱԳՆ-ն տարածել է հետեւյալ հաղորդագրությունը. «Ի պատասխան մեր հարցմանը թուրքական իշխանությունների պաշտոնական պատասխանում նշվում է, որ վերջին շրջանում վիզային ռեժիմի խախտման համար Թուրքիայի տարածքում ձերբակալվել է 542 անձ, որոնցից միայն մեկն է ՀՀ քաղաքացի»:

Սարկոզիից հեռացավ հերթական կինը

Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին բաժանվում է իր կնոջից, այդ մասին հաղորդել է Ելիսեյան պալատը: Նշվում է, որ Նիկոլա եւ Սիսիլիա Սարկոզիները բաժանվում են փոխադարձ համաձայնությամբ, այլ մանրամասներ առայժմ չեն հաղորդվում: Սարկոզիներն ամուսնացել են 1996-ին եւ ունեն 10-ամյա մեկ որդի: Նիկոլան եւ Սիսիլիան մինչ հանդիպումը արդեն մեկ անգամ ամուսնացած եղել են եւ մեկական երեխաներ էլ ունեն նախին ամուսնություններից:

Հակաամերիկյան հավաք Թեհրանում

ԱՐՄՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Իրանի մայրաքաղաք Թեհրանում ավարտվեց Կասպյան երկրների հերթական գագաթաժողովը: Վերջին տարիներին այս երկրների նմանատիպ հավաքներ տեղի են ունեցել 26 անգամ, սակայն բոլորն էլ ավարտվել են անարդյունք՝ մինչ օրս Կասպից ծովի միջազգային ու իրավական կարգավիճակը որոշված չէ: Դեռ մինչեւ գագաթաժողովի սկիզբը փորձագետները հայտարարում էին, որ այս հավաքը եւս կավարտվի առանց լուրջ տեղաշարժի, քանի որ հակասություններն ավազանի երկրների, հատկապես Թուրքմենստանի, Ադրբեջանի ու Իրանի միջեւ այնքան խորն են, որ այս հարցում տեղաշարժ հնարավոր չէ: Ինչեւէ, չնայած ծովի կարգավիճակի վերաբերյալ հաջողության հասնելու հույսերի բացակայությանը, այնուամենայնիվ թեհրանյան գագաթաժողովը կարելի է անվանել պատմական, քանի որ առաջին անգամ Իրանի մայրաքաղաքում տեղի ունեցավ նմանատիպ հավաք ավազանի երկրների առաջին դեմքերի մասնակցությամբ: Միջազգային մամուլին հատկապես հետաքրքրել էր Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի այցը Թեհրան: Սա իսկապես պատմական իրադարձություն էր, քանի որ մինչ այդ ռուսական եւ ոչ մի ղեկավար պաշտոնական այցով չէր եղել Իրանում: Բացառությամբ թերեւս Սալինի, որը 1943-ին եկել էր թեհրանյան հայտնի կոնֆերանսին մասնակցելու, սակայն այն ժամանակ այդ երկիրը կիսանկախ եւ կիսաօկուպացված մի տարածք էր, որտեղ հյուսիսը վերահսկում էր ԽՍՀՄ-ը, իսկ հարավը՝ Մեծ Բրիտանիան:

Ինչեւէ, ուշադրությունն այս հավաքի նկատմամբ մեծ էր նաեւ Թեհրանի միջուկային ծրագրերի շուրջը վերջին ամիսներին սրվող հարաբերությունների եւ ԱՄՆ-ի ու Եվրամիության աճող ճնշումների պատճառով: Ռուսաստանի նախագահի այցը Իրան Արեւմուտքում շատերը գնահատեցին որպես իրանական քաղաքականությանն աջակցելու նշան: Թեհրան Պուտինի ժամանմանը չխոչընդոտեցին նույնիսկ մամուլում հայտնված այն տեղեկությունները, թե իբր նրա դեմ մահափորձ է նախապատրաստվում: Դեռ մինչեւ հավաքի սկիզբը շատերը հայտարարում էին, որ այն անցնելու է իրանական քաղաքականության պաշտպանության եւ հակաամերիկյան կարգախոսներով: Նման կարծիքը իրականություն դարձավ, քանի որ գագաթաժողովի հիմնական արդյունքը եղավ ոչ թե Կասպից ծովի հարցի առաջընթացը, միանգամից ասենք, որ այստեղ, ինչպես եւ սպասվում էր, տեղաշարժ չկա, այլ Իրանի դեմ հնարավոր հարձակման մասին համատեղ հայտարարությունը: Փաստորեն ավազանի երկրները ստորագրեցին մի փաստաթուղթ, որով հրաժարվում են տրամադրել իրենց տարածքները իսլամական հանրապետության դեմ հնարավոր հավաքի դեպքում:

Տես էջ 3

Այս տարի միասնական քննություններ կանցկացվեն վեց առարկաներից

Ուղեցույցները դպրոցներին կհասանեն նոյեմբերի սկզբին

Այս տարի միասնական քննական համակարգով շրջանավարտները քննություն կհանձնեն վեց առարկաներից: Նախորդ տարի միասնական համակարգով անցկացված հայոց լեզու եւ գրականություն առարկային այս տարի կմիանան նաեւ մաթեմատիկայի եւ 4 օտար լեզուների՝ անգլերենի, ռուսերենի, գերմաներենի եւ ֆրանսերենի քննությունները:

Միասնական համակարգով անցկացվող քննությունների կազմակերպման ընթացքի վերաբերյալ երեկ ասուլիս էր հրավիրել Գնահատման եւ թեստավորման կենտրոնի (ԳԹԿ) տնօրենի պաշտոնակատար **Մանուկ Մկրտչյանը:** ԳԹԿ նախկին տնօրեն Վանյա Բարսեղյանը, ինչպես տեղեկացրին ասուլիսի սկզբում, ազատվել է տնօրենի պաշտոնից իր դիմումի համաձայն եւ նախարարի առաջարկով առաջիկայում կզբաղվի այլ աշխատանքով:

Մանուկ Մկրտչյանն ասաց, որ եթե այս տարվա 6 առարկաների քննությունները հաջող անցնեն, եկող տարի շրջանավարտները բոլոր առարկաները կհանձնեն նոր՝ միասնական համակարգով: Նրա խոսքով, մինչեւ դեկտեմբեր կհաստատվեն քննությունների անցկացման կարգը, կազմակերպման ընթացքը, գնահատման եւ բողոքարկման ձեւերը, կորոշվի նաեւ ուսուցիչների վերապատրաստման դասընթացների հարցը:

Խոսելով կենտրոնի աշխատանքի սկզբունքներից՝ Մանուկ Մկրտչյանն ընդգծեց, որ իրենց աշխատանքները բաց են եւ քննարկման առիթ կարող են լինել բոլոր ցանկացողների համար: Նրա խոսքով, յուրաքանչյուր առարկայի թեստերը կազմելուն զուգահեռ շաբաթական մեկ անգամ քննարկում են կազմակերպել շահագրգիռ անձանց համար, հաշվի են առել բնագավառի մասնագետների կարծիքը: Նախորդ տարի հայոց լեզվի եւ գրականության թեստերի հեղինակները մեծաթիվ ընդդիմախոսներ ունեցան: Այս տարի, կենտրոնի տնօրենի խոսքով, թեստերի քննարկմանը հրավիրվել են նաեւ ընդդիմախոսները, որոնց կարծիքը հաշվի է առնվել. «Միայն վերջում կարծիք հայտնելը իմիջ է: Թեստերի մշակման ընթացքն անընդհատ զուգակցվել է քննարկումներով, շաբաթը մեկ անգամ թեստերի մշակումներին մասնակցել են ոլորտի ներկայացուցիչները»:

Առարկայական թեստերը, Մանուկ Մկրտչյանի ասելով, առաջինը փորձարկել են կենտրոնի աշխատակիցները: Այսօր մաթեմատիկա առարկայի թեստերը բովանդակային փորձարկման կդրվեն Կոտայքի մարզում եւ Երեւանում, որը հնարավորություն կտա մինչ ձեռնարկ-ուղեցույցների տպագրումը հղկելու սխալները: Ձեռնարկների նախագծերն արդեն մշակվել են եւ ամենաուշը նոյեմբերի սկզբին կտպագրվեն ու անվճար կբաժանվեն դպրոցներին:

Նախորդ տարվա միասնական քննության ժամանակ խնդիրներ են առաջացրել ոչ բավարար քանակով վերապատրաստված ուսուցիչներն ու կազմակերպիչները: ԳԹԿ տնօրենը նշեց, որ այս անգամ պետք է բավարար քանակով ուսուցիչների եւ քննության կազմակերպիչների վերապատրաստեն: Ինչ վերաբերում է քննական առարկաների թեստերի որակին եւ բովանդակությանը, որով «Ազգը» հետաքրքրվեց, Մանուկ Մկրտչյանը շտապեց չընդլայնվեց, քանի որ թեստերին ծանոթանալու համար դեռ ժամանակ կա (տպագրվելուց հետո): Բայց բոլոր մտահոգվողների համար շեշտեց, որ առարկայական հանձնաժողովների նախագահներին, ում վստահված է թեստեր կազմելը, նշանակում է կրթության եւ գիտության նախարարը: Իսկ հանձնաժողովի անդամների նշանակումը հանձնաժողովի նախագահի որոշելիք է, բայց սկզբունքորեն հանձնաժողովում պետք է ընդգրկված լինեն թե՛ առարկայի մասնագետներ, թե՛ մանկավարժներ:

Մաթեմատիկայի թեստերի փորձարկմանը կհաջորդեն նաեւ օտար լեզուների թեստերի փորձարկումները:

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Երեւանը կունենա ընտրովի քաղաքապետ եւ նրա կողմից նշանակվող տարածքային ղեկավարներ

1-ին էջից

Հաջորդ առանցքային հարցն առնչվում է քաղաքային համայնքներին, որոնցիսիք այլեւս չեն լինելու: Համայնքների փոխարեն լինելու են 10 վարչական շրջաններ, ներկայիս 12 համայնքների փոխարեն: Նորք-Մարաշ համայնքը նախատեսվում է միացնել Ավանին, Նուբարաշենը՝ Էրեբունուն: Քաղաքային ավագանու հայեցողությանն է թողնված վարչական տարածքների ավելացման կամ նվազեցման իրավունքը, բայց օրենքով սահմանվել է, որ դրանք չպետք է գերազանցեն 12-ը եւ ավելի փոքր լինեն 8-ից: Եվ ամենակարեւոր խնդիրը, որը, բարեբախտաբար, խելամիտ լուծում է ստացել՝ վարչական տարածքների ղեկավարներին պետք է նշանակի քաղաքապետը:

Սրանով հուսանք, որ վերջնականապես կանհետանա Երեւանի նախկին գլխավոր ճարտարապետ Նարեկ Սարգսյանի տխրահռչակ նախագիծը, որը նախատեսում էր Երեւանը բաժանել փոքր քաղաքների, որոնց ղեկավարները պետք է ընտրվեին ուղղակի եւ ունենային, ըստ էության, անսահմանափակ իրավունքներ: Ինչի պատճառով Երեւանը որպես մեկ միավոր ամբողջությամբ կդադարեր գոյություն ունենալուց, կստեղծվեր կառավարման խառնաշփոթ, իսկ համայնքապետները կվերածվեին տեղական ֆեոդալների՝ առավել վատթար, քան հիմա են:

«Ընտրովի քաղաքապետ - վարչական տարածքների նշանակովի ղեկավարներ» տարբերակը, որի անհրաժեշտության մասին նշել ենք այս խնդրին վերաբերող մեր հրապարակումներում, փաստորեն կպահպանի մայրաքաղաքի՝ մեկ միասնական միավոր լինելը եւ կապահովի նրա ուղղահայաց կառավարումը: Դա ենթադրաբար ավելի արդյունավետ կլինի, քանի որ ներկայիս՝ «նշանակովի քաղաքապետ եւ ընտրովի թաղապետներ» կառավարման ձեւը լծակներ չի տալիս քաղաքապետին տեղերում այս կամ այն խնդրի կարգավորման վրա ազդելու համար:

Վարչական շրջանների ղեկավարներին քաղաքապետը պետք է նշանակի՝ խորհրդակցելով քաղաքային ավագանու խմբակցությունների եւ վարչական ավագանիների հետ: Ի դեպ, ավագանիների մասին:

Քաղաքի ավագանին կազմված կլինի 55 անդամներից: Ընտրվելու է համամասնական կարգով՝ կուսակցական ցուցակներով: Սա նույնպես առաջընթաց կարելի է համարել, որը, հուսանք, ապագայում կսարածվի նաեւ Ազգային Ժողովի ընտրության դեպքում: Վարչական տարածքների ավագանիների թիվը կախված կլինի բնակիչների թվից: Մինչեւ 55 հազար բնակիչ ունեցող համայնքում ավագանու անդամների թիվը կլինի 10, 55-ից 100 հազարի դեպքում՝ 12, 100 հազարից ավելիի դեպքում՝ 15:

Վարչական տարածքների ավագանիներն, ի պատասխան մեր հարցի, թե ինչո՞վ են դրանք զբաղվելու, ըստ Գետրգ Դանիելյանի, համարվելու են քաղաքապետին եւ քաղաքային ավագանուն օժանդակող մարմիններ: Քանի որ Երեւանն ունենալու է իր բյուջեն, ապա նրանք եւս կարող են նախահաշիվներ ներկայացնել իրենց տարածքի վերաբերյալ: Բացի այդ, քաղաքային ավագանին իր որոշ լիազորություններ կարող է պատվիրակել տարածքային ավագանիներին: Այդտեղներն, իհարկե, նշել, որ վարչական տարածքների ավագանիների դերը մնում է անորոշ:

«Իսկ ինչպե՞ս է ընտրվելու քաղաքապետը» հարցին պատասխանելով, արդարադատության նախարարն ասաց, որ քաղաքապետ պետք է դառնա այն կուսակցության ցուցակի առաջին դեմքը, որը կհավաքի քաղաքի 55 հոգուց բաղկացած ավագանու տեղերի ավելի քան 40 տոկոսը: Իսկ եթե այդ կուսակցության ձայներն ավելի քիչ լինեն 40 տոկոսից, ապա քաղաքապետի թեկնածությունը կառաջադրի պարզ մեծամասնություն ունեցող ուժը:

Ներկայացնելով Երեւանի ապագա կարգավիճակի օրենքի նախագիծը, Գետրգ Դանիելյանը հայտնեց, որ այնտեղ դեռեւս կան վիճելի հարցեր, մեկ շաբաթ հետո կառավարությունը վերստին անդրադառնալու է դրանց: «Որո՞նք են այդ վիճելի հարցերը», **«Ազգի»** հարցի կապակցությամբ նշվեց, որ դրանք վերաբերում են, օրինակ, քաղաքապետարանի եւ տարածքային գործադիր իշխանության հարաբերությունների որոշ հարցերին:

Մեր հաջորդ հարցին, թե ինչպե՞ս են վերաբերվում այս փաստաթղթին Երեւանի քաղաքապետները, նախարարը պատասխանեց, որ ոչ բոլորը միանշանակ կարծիք ունեն: Մի մասը գտնում է, որ կառավարման նոր տարբերակն ավելի արդյունավետ է: Արդարադատության նախարարը նշեց նաեւ, որ այս օրենքը պետք է ընդունվի մինչեւ այս տարվա դեկտեմբերի 5-ը, ինչպես նախատեսված էր սահմանադրական փոփոխություններով:

ՕՐԳԱՆԱԿԱՆ ՍԼՈՒԽԳ

«Ֆրուֆուլ Արմենիայի» զարգացման ծրագիրը գյուղատնտեսության ոլորտում

«Ֆրուֆուլ Արմենիայի» կազմակերպած հերթական կոնֆերանսը նվիրված էր կայուն գյուղատնտեսության եւ գյուղական շրջանների զարգացումը Հայաստանում թեմային: Կոնֆերանսի բացման խոսքը տվեց ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ Սամվել Ավետիսյանին: «Արմենիա-Մարիոթում» հավաքված ֆերմերներին ներկայացվեցին «Կանաչ արահետ» կազմակերպության աջակցությամբ գյուղական շրջանների զարգացումը խթանող մի շարք ծրագրեր:

Շուկայում օրգանական, բուսական սննդի իրացումն ավելի մատչելի դարձնելու խնդիրն է ծանոթանալ միջազգային փորձին, ինչպես նաեւ «Կանաչ արահետ» կազմակերպության հետ համագործակցելը: Հվեյցարիայի զարգացման գործակալության ֆինանսավորման շնորհիվ ձեւավորվում է սպառողական պահանջարկը հայկական շուկայում:

Իսկ տեղեկատվական պահանջարկի ձեւավորմանը խթան կդառնա օրգանական գյուղատնտեսության ճիշտ վարումը, որը նաեւ լավ ազդեցություն է թողնում շրջակա միջավայրի վրա:

Ինչպես տեղեկացրեց «Կոնվերսբանկի» տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Տիգրան Սարգսյանը, բանկը հնարավորություն է տալիս Հայաստանում բոլոր ֆերմերական, գյուղատնտեսական ոլորտների ներկայացուցիչներին բանկի վարկերի շնորհիվ զարկ տալու գյուղատնտեսության, ֆերմերների ախտանիշների զարգացմանը:

ՆԱՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Տախիների վարորդների պահանջները դարձան կառավարական որոշումներ

1 տախու լիցենզավորումը կկազմի 25 հազար դրամ, 1-ից ավելի տախիներինը՝ 200 հազար դրամ

Մի շարք օրենքներում փոփոխություններ կատարելու նախագծեր ընդունելով, երեկ կառավարությունը, փաստորեն, ընդառաջեց ամիսներ առաջ բողոքի ցույցի դուրս եկած տախիների վարորդներին: Հիշեցնենք, որ նրանք բողոքում էին իրենց գործունեության լիցենզավորման պայմաններից եւ դրանց փոփոխության վերաբերյալ հավաստիացումներ ստացան վարչապետ Սերժ Սարգսյանից:

Համաձայն երեկ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» օրենքում կատարված լրացման, այն դրույթը, որտեղ նախատեսվում էր հսկիչ-դրամարկղային մեքենաներ (ՀԴՄ) տեղադրել նաեւ տախիներում, վերացվել է: Տեղեկացնելով լրագրողներին այդ մասին, տրանսպորտի եւ կապի նախարար **Անդրանիկ Մանուկյանն** ասաց, որ ՀԴՄ-ների տեղադրման անհրաժեշտությունը տախիներում չկա:

Հաջորդը «Պետական տուրքի մասին» օրենքում կատարված փոփոխությունն է: Նախարարը հիշեցրեց, որ մինչ այս փոփոխությունը տախիների գործունեության լիցենզավորման համար, ինչպես 1 մեքենա ունեցող անհատ ձեռներեցը, այնպես էլ 1-ից ավելի մեքենաներ ունեցող տախի ծառայությունները որպես պետական տուրք պետք է վճարեին 200 հազար դրամ: Սա էր տախու վարորդների դժգոհությունը հարուցած հիմնական պատճառը: Օրենքի փոփոխությամբ արդեն, 1 տախի ունեցողի լիցենզավորման համար պետական տուրքը կկազմի 25 հազար դրամ, իսկ 1-ից ավելի մեքենաներ ունեցող տախի ծառայություններինը՝ 200 հազար դրամ: Համապատասխանաբար, «Լիցենզավորման մասին» օրենքում, տարանջատվել են 1 եւ 1-ից ավելի մեքենա ունեցողների լիցենզավորման դրույթները:

Ցեղոտացուցիչների տեղադրման օրենսդրական պահանջի վերաբերյալ նույնպես կառավարությունը մեղմացումներ է կատարել ուղեւորափոխադրումներ իրականացնող տախիների, միկրոավտոբուսների եւ ավտոբուսների համար: Ինչպես հայտնեց Անդրանիկ Մանուկյանը, այս առթիվ հարցում է կատարվել ռուսական «ԳԱԶ» եւ «ԱՎՏՈՎԱԶ» ընկերություններին: «ԳԱԶ» ընկերությունից պատասխանել են, որ արտանետումները կլանող ցեղոտացուցիչները իրենց արտադրած մեքենաների վրա տեղադրելու համար կպահանջվի հավելյալ մոտ 400 դոլարի ծախս, իսկ «ԱՎՏՈՎԱԶԻՑ» հայտնել են, որ այդ ցեղոտացուցիչներն անհնար է տեղադրել կարբյուրատորով աշխատող ավտոբուսների վրա: Ուստի կառավարությունը որոշել է ազատել վերոնշյալ մակնիշի մեքենաներով ուղեւորափոխադրումներ իրականացնողներին ցեղոտացուցիչներ տեղադրելու անհրաժեշտությունից:

Ի պատասխան մեր հարցի, թե ցեղոտացուցիչներից ազատվում են միայն ռուսական արտադրության մեքենաները եւ միայն ուղեւորափոխադրումներ իրականացնողնե՞րը, տրանսպորտի եւ կապի նախարարն ասաց, որ ցեղոտացուցիչներ տեղադրելուց ազատվում են ներկայումս շահագործվող՝ վերոնշյալ ընկերությունների արտադրած մեքենաները, իսկ Հայաստան նոր ներմուծվող բոլոր մեքենաները պետք է ունենան այդ ցեղոտացուցիչները: Առանց դրանց մաքսազերծում չի արվում: Ինչ մնում է միայն ուղեւորափոխադրումներ իրականացնողնե՞րն են ազատվում ցեղոտացուցիչներ տեղադրելուց, թե՞ նաեւ նույն մեքենաներն ունեցող մյուս քաղաքացիները, ապա Անդրանիկ Մանուկյանը հայտնեց, որ այս որոշումն ազդում է միայն ուղեւորափոխադրումներ իրականացնողների վրա:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 20 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հավելվածներ (գրչագր) / հեռ 582960
Լրագրողների սենյակ / հեռ 581841
Համակարգ. ծառայություն / հեռ 582483
Տարբերակ լրահաւաք ծառայություն / հեռ 529353
Համակարգչային շարվածք
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են
համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Ո՞վ է «ֆալcusարsային» վիճակում, ո՞վ է համոզված, ո՞վ է հույսով

ՀՀԿ-ական Համլետ Հարությունյանն առաջին նախագահի առաջադրվելու վերաբերյալ կասկած չունի

Երեկ «Ուրբաթ» ակումբում հյուրընկալված ՀՅԿ-ական պատգամավոր Համլետ Հարությունյանին խիստ զարմացրեց այն հարցը, որով լրագրողը կասկած էր հայտնում, թե ՀՅԿ թեկնածուն նախագահական ընտրություններում կարող է հաղթել հենց առաջին փուլում: Մայիսի 12-ի խորհրդարանական ընտրություններից հետո մի՞թե կարելի է այդպիսի կասկածներ ունենալ, հոետորաբար հարցրեց նա: Ըստ նրա, որեւէ թեկնածու չի կարող լուրջ մրցակից լինել Հանրապետականի թեկնածուին: Իսկ Լեւոն Տեր-Պետրոսյանի շուրջը ստեղծված իրարանցումը, ամենահին քաղաքական գործիչներից մեկի կարծիքով, բացարձակ անհանգստանալու պատճառ չի կարող լինել, չնայած հանձին առաջին նախագահի՝ հզոր ֆիգուրի եւ նոր լիդերի հայտնվելը քաղաքական դաշտում, իհարկե, փոփոխություն է: Այդ բանը ժխտողը հիմար պետք է լինի: Բացի այդ էլ. «ՀՅԿ-ն արհամարհական վերաբերմունք չունի որեւէ քաղաքական ուժի կամ գործչի հանդեպ»: Ըստ նրա՝ նոր լիդերի ի հայտ գալը, ճիշտ է, փոփոխություն է, բայց ե՛ւ այդ լիդերը, ե՛ւ նրա շուրջը համախմբված ուժերը գտնվում են «ֆալcusարsային» վիճակում, ինչը վտանգ է պարունակում, որ նրանք շատ արագ կարող են սպառել իրենց եւ արդեն որոշ ժամանակ հետո ասելիք չունենալ, ընդ որում նախագահական թեկնածուի շատ միակողմանի պայքար է սկսվել մեկ թեկնածուի՝ Լ. Տեր-Պետրոսյանի շուրջը պտտվող ուժերի կողմից: Մինչդեռ իշխանական թեւը դեռեւս չի մոտեցել քարոզչական մեկնարկին: Բոլոր դեպքերում Հ. Հարությունյանը գտնում է, որ առաջին նախագահն այժմ արդեն չի կարող հետ կանգնել սկսվածից ու անպայման պետք է առաջադրվի, որովհետեւ «Մարիոթի» ելույթից ու դրանից հետո տեղի ունեցող հանդիպումներից հետո բարոյական չի լինի չառաջադրվելը: Սակայն այդ բոլորից հետո, միեւնույն է, Հ. Հարությունյանը համոզված էր, որ քաղաքական որեւէ արտառոց փոփոխություն չի լինի:

Վարչապետ Սերժ Սարգսյանի Միացյալ Նահանգներ այցի մեջ այլ պետությունների «դաբրոներ» փնտրող լրագրողներին Հ. Հարությունյանը հակադարձեց, թե փոխանակ տարածաշրջանային այսրոպեական խնդիրներով մտահոգվենք (ԱՄՆ-ի՝ Իրանին հարվածելու, թուրք-իրաքյան եւ այլն), կենտրոնացել ենք նախագահական ընտրությունների վրա, եւ վարչապետի ԱՄՆ այցում էլ հենց այդ խնդիրների հետ կապված մտահոգությունները պետք է տեսնել:

Հ. Հարությունյանի հետ հանդիպման մի կարեւոր մասն էլ անդրադարձ էր օրերս ԱԺ գիտության կրթության, մշակույթի եւ երիտասարդության հանձնաժողովում քննարկված կառավարության ներկայացրած օրինագծին, որը երիտասարդության հետ կապված հարցերում պետության քաղաքականությունը կանոնակարգելու փորձ է: Օրինագիծը շատ բուռն քննարկվել է՝ մի կողմ դնելով կուսակցական մոտեցումները, որոշ հարցերի անհասակ լինելու պատճառով հետաձգվել 60 օրով, մինչեւ նոր առաջարկներով անպարզ դրույթներն ամբողջանան:

Գլխավոր հակասությունն այն է, որ երիտասարդության՝ երիտասարդ ընտանիքների, երիտասարդ գիտնականների, երիտասարդ մանկավարժների եւ երիտասարդության այլ շերտերի հանդեպ հասցեական քաղաքականությունը պետք է համապատասխանի պետության հնարավորություններին: Այնպես որ՝ այս տարվա մեջ այդ օրենքի ընդունում դեռ չենք տեսնի, իսկ մյուս տարի էլ՝ տեսնենք:

Ողերձներ ՀՀԿ-ին ՀՅԴ-ից

Երեկ «Փաստարկ» ակումբի հյուր, ՀՅԴ խորհրդարանական խմբակցության ղեկավար **Հրայր Կարապետյանի** հայտնած մտքերում ողերձներ կային ՀՅԿ-ին:

Ըստ դաշնակցական պատգամավորի՝ Հայաստանի նախագահի պաշտոնում Հանրապետականի թեկնածուի ընտրության դեպքում նպատակահարմար չէ հանրապետական վարչապետ ունենալը՝ կամ այլ կուսակցությունից, կամ անկուսակցական վարչապետ ունենալն է ցիտ: Լրագրողները հետաքրքրվեցին՝ եթե երեք պաշտոնները (երկրի նախագահ, ԱԺ նախագահ, վարչապետ), Հանրապետականը վերցնի, ՀՅԴ-ն ինչ-որ հավասարակշռության մեխանիզմներ գտնելո՞ւ է: ՀՅԴ խմբակցության ղեկավարը մի փոքր լավատես էր, քանի որ հետեւում է ՀՅԿ հայտարարություններին եւ դրանցից եզրակացնում, որ հանրապետականներն էլ չեն ուզում միակուսակցական քաղաքական համակարգ Հայաստանում. «Այդ քաղաքական ուժի ղեկավարության մեջ մարդիկ կան, որ իրենց մաշկի վրա զգացել են միակուսակցական ռեժիմի հետեւանքները. կարծում եմ, որ Հանրապետականն ուժ կգտնի իր մեջ Հայաստանում բազմակուսակցական համակարգը պահպանելու», ասաց նա: Նրա այդ եզրակացության համար նաեւ հիմք է այն հանգամանքը, որ չնայած խորհրդարանական ընտրությունների արդյունքում կարող էր միայն հանրապետական կառավարություն կազմվել, սակայն մեծամասնության բարի կամքով ձեւավորվեց կոալիցիոն կառավարություն:

Մ. Խ.

Հ.Գ.- *Մամուլի ակումբները հեռուստաընկերությունների կողմից միասնաբար բոյկոտելը կարելի է դիտել որպես այլակարծությունը խեղդելու փորձ, քանի որ մի կենտրոնից լավագույնս կառավարվող բոլոր հեռուստաընկերությունների պարագայում այդպիսի բազմակարծ մամուլի ակումբներ ունենալը պարզապես գլխացավանք է նախագահական ընտրություններից առաջ: Բայց հեռուստատարածքը ոչ միայն մեր կառավարող շրջանակներինն է, այլ երկրինն ու ժողովրդինը. այնպես որ, լավ չեք անում, հարգելի իշխանավորներ, երբ այդպիսի հրահանգներ եք իջեցնում՝ «էս սարն իմն է, էս ծառն իմն է» ոգով: Ազնիվ մրցակցության մեջ թող որեւէ ակումբ չդիմանա ու անգոյանա, բայց ոչ գոտկատեղից ներքեւ հարվածելով: Ասուլիսներից հոգնած տողերիս հեղինակի կարծիքով՝ ասուլիսն՝ ասուլիսների վարողին, հնարամտությունը՝ սեփական ուժերով նյութ հայթայթող հեղինակներին, կամ՝ կեսարինը՝ կեսարին, ասածունն՝ ասածուն: Մնացյալը՝ մեր իշխանավորների խղճին:*

Այսօր

◆Ժամը 10.00-ին Մոսկվայի տանը տեղի կունենա ռեմասոլոգների կոնֆերանսի բացումը:

◆Մեկ ժամ անց տեղի կունենա Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նիստը:

◆Ժամը 11.00-ին Գիտությունների ազգային ակադեմիայում տեղի կունենա հայ-սլովակյան գործարարների համաժողով:

◆Մեկ ժամ անց «Փաստարկ» ակումբում մամուլի ասուլիս կա «Համայնք եւ իրավունք» ՀԿ-ի նախագահ Սամվել Մկրտչյանը:

◆Ժամը 12.00-ին «Տեսակետ» ակումբի հյուրերն են Ալվարդ Պետրոսյանը եւ Հայկ Դեմոյանը:

◆Մեկ ժամ անց «Տեսակետ» ակումբի հյուրը կլինի Հովհաննես Հովհաննիսյանը:

◆Ժամը 13.00-ին «Հայելի» ակումբում տեղի կունենա Արմեն Ռուսամյանի մամուլի ասուլիսը:

◆Նույն ժամին ռադիոտանը տեղի կունենա մամուլի ասուլիս Երեւանյան 1-ին միջազգային փառատոնի բացման կապակցությամբ:

◆Ժամը 13.30-ին ԱԺ Ոսկեզօծ դահլիճում կկազմակերպվի Վահան Հովհաննիսյանի եւ Նիկոլայ Ռիժկովի համատեղ մամլո ասուլիսը:

◆Ժամը 13.00-17.00 Ամերիկյան համալսարանում տեղի կունենա կրթական տեղեկատվական ցուցահանդես՝ կազմակերպված միջազգային կրթության ամերիկյան խորհուրդների կողմից:

◆Ժամը 15.00-ին Խնկո Ամոր անվան գրադարանում տեղի կունենա Էդվարդ Ավագյանի ծննդյան 80-ամյակին նվիրված ցերեկույթ:

«Հայերը եւ Բաքուն» գիրքը ռուսերեն տարբերակով

Բաքվահայության ստեղծարար կյանքը «գնահատվեց» բնաջնջմամբ

Մեկ տարի առաջ հրատարկվեց եւ Հայաստանի Հանրապետության անկախությանը նվիրվեց «Հայերը եւ Բաքուն» գիրքը: Երեկ 500 օրինակով ներկայացվեց գրքի ռուսերեն տարբերակը, որը շուտով կհայտնվի Ռուսաստանի գրախանութներում: Այն տաղանդաշատ ու ստեղծարար համայնքներից մեկի՝ բաքվահայության պատմությունն է, որում հայության արարչական կեցությանը համադրվել է նրա բնաջնջումը: «Հայերը եւ Բաքուն» գիրքը անդրադառնում է 1850-ականներից մինչեւ 1920-ականները Բաքվում հայերի դերակատարության ու հայ համայնքի 30 հազար ներկայացուցչի բնաջնջմանը, որ իրականացվել է երկու ամիս շարունակ, 1918 թվականի սեպտեմբերի 15-ից սկսած: Իրագործողները եղել են թուրքական բանակն ու Ադրբեջանի Հանրապետության կառավարությունը:

Գիրքը կազմված է փաստագրական նյութերի հիմքով եւ 6 տարվա աշխատանքի արդյունք է, աղբյուրները 87-ն են՝ հայկական եւ ռուսական: Ողջ նյութի ուսումնասիրումն ու փաստերի համադրումը հեղինակին՝ լրագրող, հայագետ **Խաչատուր Դադայանին** հիմք են տալիս 30 հազար բաքվահայերի բնաջնջումը հենց ցեղասպանություն բառով անվանելու եւ 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում իրականացված Հայոց ցեղասպանության շարունակությունը համարելու: «Թուրքիան ստեղծեց Ադրբեջանի Հանրապետությունը, թուրքերն իրենց խայտառակ պարադոքսները՝ հայասպանությունը, սովորեցրին կրտսեր ցեղակիցներին, 1915-ի եղեռնը 1918-ին կրկնեցին Բաքվում, Բաքվի եւ Ելիզավետպոլի նահանգներում: Դա ցեղասպանություն էր՝ ազգային պատկանելության հատկանիշի հիման վրա գործված, նախապես ծրագրված եւ իրականացված զանգվածային ոճրագործություն, որը ինչքան էլ կոծկված, լռության մատնված լինի, վաղեմության ժամկետ չունի», գրքի նախաբանում փաստել է հեղինակը փաստագրական աղբյուրներից ելնելով: Նույն հիմքով ընթերցողին խաչատուր Դադայանը տեղեկացնում է. «Բաքվի ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման ուղղությամբ առկա է լրջագույն կռվան. 1918-ի վերջին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի եւ ԱՄՆ-ի ներկայացուցիչները նյութական վնասի չափը պարզելու նպատակով ստեղծել են Վերստուգիչ հանձնաժողով եւ Թուրքիային պարտադրել մի փոխհատուցման, որի ֆինանսական համարժեքն այսօրվա հաշվարկով ահռելի գումար է կազմում»:

Համաձայն ուսումնասիրությունների, հայերի դեմ կազմակերպած սպանդի ու հասցրած վնասի համար Թուրքիան Բաքվում սպանված հայերի կամ թալանված հայերի ժառանգներին 3.5 մլրդ, ներկայիս Ադրբեջանն էլ 102 մլն ֆունտ ստեռլինգ փոխհատուցում ունի տալիք, քանի որի իրեն հայտարարել է Ադրբեջանի Հանրապետության ժառանգորդը:

«Հայերը եւ Բաքուն» գիրքը հեղինակը զուտ պատմագիտական չի համարում. «Այն քաղաքագիտական ուսումնասիրություն է, նաեւ ինչ-որ առումով ադրբեջանական հակահայկական քարոզչության պատասխան»: Սակայն պետությունը հրատարակված գրքի տպաքանակը՝ 500 օրինակ, ուղղակի անհամադրելի է ռուսաստանյան եւ ընդհանրապես միջազգային շուկան ողողած ադրբեջանական սահող քարոզչության ֆանտի ու տեսականու հետ: «Հայերը եւ Բաքուն» գրքի ռուսերեն տարբերակի տպաքանակն ավելացնելու համար միջոցներ են անհրաժեշտ, իսկ անգլերեն տարբերակը՝ նույն 500 տպաքանակով հրատարակվելու է առաջիկայում:

ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հակաամերիկյան հավաք Թեհրանում

1-ին էջից

Այս փաստաթղթի ստորագրումը կարող ենք գնահատել որպես իրանական դիվանագիտության լուրջ հաղթանակ: Իրանցիները նման հաջողության համար պարտական են ռուսներին, որոնց աջակցությունը հիմնական դեր խաղաց Իրանի համար կարեւորագույն փաստաթղթի ստորագրմանը: Հասկանալի է, որ այս որոշումը չի կարող արժանանալ Սպիտակ տան հավանությանը, որին փաստորեն զրկում են տարածաշրջանում ռազմական քաղաքականություն վարելու հնարավորությունից: Բացի դրանից ԱՄՆ-ը բոլոր հիմքերը ունի հայտարարելու, որ իր կողմից ակտիվ կերպով ֆինանսավորվող Ադրբեջանի եւ Ղազախստանի առաջնորդների նման քայլը հակաամերիկյան է:

Հիշեցնենք, որ ամերիկյան ֆինանսավորման պայմաններում միայն այս երկրներին հաջողվեց ստեղծել իրենց կասպյան նավատորմիղը: Կասպից ծովի ավազանը նախկինում հայտարարվում էր ոչ ռազմականացված, եւ ավազանի 5 երկրներից 4-ը պաշտոնապես հայտարարում էին այնտեղ ռազմածովային մեծ ուժեր պահելու անթույլատրելիության մասին, այժմ փոխել են իրենց քաղաքականությունը: Մերձկասպյան երկրներն արագորեն զինվում են, մեծացնելով ծովում իրենց ռազմական ներկայությունը: Սկսված այս ռազմական մրցակցությանը, ինչպես նշեցինք, մեծապես նպաստում է Միացյալ Նահանգները: Կասպից ծովում ամենամեծ ռազմական նավատորմը ունի Ռուսաստանը, որի պաշտպանության նախարարը վերջերս հայտարարեց ռազմական նավատորմի հզորացման եւ ռազմատեխնիկայի թարմացման անհրաժեշտության մասին: Վերջին շրջանում ամերիկացիների օգնությամբ իր ռազմածովային ուժերը լրջորեն մեծացրել է նաեւ Ադրբեջանը: Ըստ որոշ ռազմական մասնագետների, այսօր ծովում ադրբեջանական ուժերը զիջում են միայն ռուսականին: Կասպիցի ավազանի մյուս երկրները փորձում են հետ չմնալ ռազմական այս մրցավազքից: 2003 թվականին Իրանը Պարսից ծոցից Կասպից ծով փոխադրեց մի քանի ռազմանավեր, այդ թվում հրթիռակիր մի նավ: Իր հերթին ծովային նավատորմը ուժեղացնում է չեզոքության մասին հայտարարած Թուրքմենստանը: Վերջինս Ուկրաինայից արդեն գնել է տասը «Կալականով» եւ «Գրիֆ» տիպի ռազմական մոտորանավակներ: Ազգաբաղը պատրաստվում է մեծացնել ռազմածովային ուժերում ծառայող նավաստիների թիվը՝ հասցնելով 3 հազարի: Հասկանալի է, որ Սպիտակ տունը ակտիվորեն նպաստելով Ադրբեջանի եւ Ղազախստանի ռազմական հզորացմանը ծովում, միաժամանակ ակնկալում էր, որ այդ երկրների տարածքները կկարողանա օգտագործել տարածաշրջանում սեփական ազդեցությունը տարածելու համար: Հիշեցնենք նաեւ, որ ադրբեջանաիրանական սահմանին Պենտագոնը ձեռնամուխ է եղել նոր ռադիոտեղորոշիչ կայանի կառուցմանը, ինչը հասկանալի կերպով առաջացրել է Թեհրանի դժգոհությունը: Սակայն այս քաղաքականության մեջ հետաքրքրական է Ռուսաստանի դիրքորոշումը, որը սկզբում հայտարարում է Գաբալայի կայանը ամերիկացիների հետ համատեղ շահագործելու մասին, այսպիսով հարվածի տակ դնելով Իրանին, ապա ձեռնամուխ լինում համատեղ հայտարարություն կազմելուն, որով տարածաշրջանի երկրները խոստանում են չտրամադրել իրենց տարածքները Իրանի դեմ ռազմական գործողություն սկսելու դեպքում:

Ինչպես, պարզ է, որ հանդես գալով իրանական շահերի պաշտպանի դերում, Ռուսաստանը հզորացնում է իր ազդեցությունը ոչ միայն այդ երկրի, այլ նաեւ իր համար ռազմավարական նշանակություն ունեցող Կասպից ծովի տարածաշրջանի վրա: Բացի դրանից, այս քաղաքականությունը պատասխան է ԱՄՆ-ի կոշտ դիրքորոշմանը՝ ուղղված Արեւելյան Եվրոպայում սեփական հակահրթիռային համակարգեր տեղադրելուն, ինչի դեմ ակտիվորեն հանդես է գալիս Ռուսաստանը: Այսպիսով թեհրանյան գագաթաժողովը Պուտինը օգտագործեց սեփական դիրքերի ամրապնդման եւ Կասպից ծովի ավազանում ամերիկյան քաղաքականության ակտիվության թուլացման համար:

Ռուսաստանում մթնոլորտը հագեցած է Պուտինով

Արձակուրդի բերումով Երեւանում է գտնվում Մոսկվայի մեր թղթակից Ռուբեն Հայրապետյանը: Ընթերցողներին ենք ներկայացնում «Ազգի» գլխավոր խմբագրի եւ նրա՝ համալսարանական համակուրսեցու միջեւ տեղի ունեցած զրույցը:

- Ինչո՞վ է ապրում այսօրվա Ռուսաստանը:

- Պուտինով: Բոլոր առանցքային իրադարձությունները ոչնչվում են նրա շուրջը: Մթնոլորտը հագեցած է նրանով:

- Ո՞ն է գաղտնիքը նրա հեղինակության:

- Դա սարափի վրա հենված սալինյան բութ հավաս չէ եւ ոչ էլ բրժնեւյան կոմունիստական ֆենոմեն: Նորաթուխ յուրաքանչյուր դեմոկրատիայի պայմաններում կարելի է խաբել, բայց ոչ պարտադրել:

- Այդ դեպքում ինչի՞ վրա է հենվում այդ համակրանքը:

- Դե, եթե խորը նայենք, երկրի իրավիճակի կայունացման ու կենսամակարդակի բարձրացման վրա: Բայց եթե ուզում ես իմանալ, իսկայական ազդեցություն ունեն նրա անհասական հատկությունները, անձնական հմայքը: Ուշադրություն դարձրու, օրինակ, մի «մանրուքի» վրա. Լենինից հետո Ռուսաստանի միակ ղեկավարն է, որ օտար լեզուներ գիտե:

Պուտինը իրեն թույլ է տալիս եւ կարողանում է անկաշկանդ զրուցել սեփական ժողովրդի հետ: Ֆիզիկապես առողջ է, բնավորությամբ հավասարակշռված, հումորի զգացումով, հոյակապ հիշողություն ունի, սուր միտք, ընտանիքը գերծ է նվազագույն իսկ ասեկոսեներից, խոսում է սեղմ, հստակ: Ցուցակը կարելի է շարունակել՝ հոգուս Պուտինի:

- Ժողովուրդն ինչպե՞ս ընդունեց նրա վերջին գործողությունները:

- Գոհունակությամբ եւ հաղթական երկնակամարում նրա մնալու հույսով: Ժողովրդին որ թողնես, ամեն օր նրան կարող է վերընտրել: Մարդիկ իրենց աչքի տեսածից են վախենում. Ասված չանի, իշխանության գլուխ գա Գորբաչովի կամ Ելցինի նման անկասար մեկը, էլ չենք խոսում կոմունիստական առաջնորդների մասին: Ի դեպ, այն, ինչ տեղի ունեցավ նորերս, մոտ երկու տարի առաջ կանխատեսել էր հաղթականագետ Անդրանիկ Միհրանյանը. վարչապետ, կառավարող կուսակցության լիդեր (պառլամենտը վերահսկող), բարձրագույն վարկանիշ՝ լրիվ բավարար է երկրի ամենաազդեցիկ հաղթագետը մնալու համար:

- Բայց դա Ռուսաստանի հաղթական ավանդույթներին հակասող իրավիճակ չի՞ ստեղծի: Չէ՞ որ այդ երկրում միշտ էլ հաշվի են նստել պատերազմական առաջին դեմքի հետ, եթե նա նույնիսկ եղել է սադիստ, տգետ, հիվանդ կամ տիպ:

- Ճիշտ է, այդպես է, դժվար է պատկերացնել Պուտինին նախագահի ընդունարանում ընդունելության սպասելիս, եթե նույնիսկ նա օբյեկտիվորեն չհամարվի ռուսական Դեն Սյաոպին: Բայց չէ՞ որ իր համաձայնությունը տալուց առաջ նա պայման դրեց՝ եթե նոր նախագահը լինի ազնիվ, գործունակ, աղյուսակվեց ու ժամանակակից մարդ: Մնացած կես տարում նա անպայման կգտնի իրեն հարմար մեկին, որը ձեռոտոով կարված կլինի պայմանավորվածություններին:

- Բայց դու ինքդ էլ ես գրում, որ Արեւմուտքը կհակազդի նրան: Նրան ուժեղ լիդեր պետք չէ:

- Անշուշտ, բայց արդեն ուշ է: Պուտինը Ելցինի պես թալանված ու բարոյալքված երկրի ղեկավար չէ, որի առանցքային նախարարներին ամերիկացիներն էին նշանակում, կամ որտեղ ազգամիջյան կոնֆլիկտներ էին հրահրվում արտասահմանյան հետախուզական ծառայությունների միջոցով:

Ռուսաստանում այն կարծիքն է ստեղծվել, որ Պուտինը, չասենք՝ մասների վրա խաղացնում է, բայց չեկիստի իր սուր, ճկուն, խորաթափանց մտքով, անձնական հմայքով գերազանցում է արտասահմանցի գործընկերներին: Համաձայնիր, նրան որպես անհասականություն չես համեմատի աշխարհի հզորագույն երկրի լիդերի հետ: Հայերս կասենք՝ նրան ծառավ կսանի ջուրը, հետ կբերի: Պարզապես երկրները տարբեր քաշային կատեգորիաների են պատկանում:

- Դու գտնում ես, որ ստեղծված բարենպաստ կացության մեջ չափազանցվա՞ծ է նավթային գործոնի դերը:

- Հաջողակ մարդուն հաջողությունն է ուղեկցում: Նավթի դերը շատ մեծ է, բայց ամեն ինչ չէ: Ներկա իրողությունն այն է, որ եթե նույնիսկ լուրջ դեմքով փորձես երկրի ներսում փնտրել Պուտինի արժանի հակառակորդներ, չես գտնի: Բոլոր կուսակցությունների ղեկավարները գիտեն, որ իրենք ոչ մի շանս չունեն: Սկզբունքորեն նրան հակադրվում են միայն կոմունիստները, այն էլ, ըստ էության, ձեւականորեն, որպես «ընդդիմադիր» ուժ: Կան նաեւ էժանագին ֆարախոսներ Կասպյարովի կամ Նեմցովի մակարդակին՝ զրոյից փոքր-ինչ բարձր «վարկանիշով»:

- Պուտինից հետո՝ որպես նախագահի, ռուս-հայկական հարաբերություններում փոփոխություններ տեղի կունենա՞ն:

- Հազիվ թե, այդ հարաբերությունները Մոսկվայում գնահատվում են որպես բարեկամական, հավասարակշռված, դեմ չեն Սերժ Սարգսյանի թեկնածությանը:

- Իսկ ի՞նչ կասես հակակովկասյան տրամադրությունների մասին:

- Դրանք մնում են, բայց ողբերգական չեն: Եթե Պուտինը մնա, իրավիճակը չի վատանա: Չգիտես ինչու Հայաստանում շատերը համոզված են, որ մեզ այդ երկրում չեն սիրում: Մինչդեռ անհամակրությունը, ինչպես դու ես ասում, համակովկասյան է, եւ նման բացասական վերաբերմունքի մեջ մեղավոր են նաեւ իրենք՝ կովկասցիները: Նրանց գերակշիռ մասը անկոչ հյուրեր են այդ երկրում, ընդորում այդ զանգվածը բնավ էլ իրեն հյուրի պես չի պահում: Ներկայումս միջինասիացիներն իրենց ֆանակով գրեթե չեն զիջում կովկասցիներին, բայց նրանց նկատմամբ վերաբերմունքն այլ է, կա արհամարհանք՝ «բութ են ու տգեղ»:

- Ի՞նչ է նկատվում Մոսկվայի հայության կյանքում:

- Ազգային կյանք կա, գործում են մոտ երկու տասնյակ ազգային-հասարակական կազմակերպություններ, լույս են տեսնում թերթեր, ամսագրեր, կան դպրոցներ, երիտասարդական ակումբներ եւ այլն: Սակայն, կարծում եմ, ամենանշանակալին Մոսկվայի հայկական եկեղեցու հոյակապ համալիրի կառուցումն է: Դա իրոք հսկա կառույց է եւ, համոզված եմ, որ երբ ավարտվի ու սկսի գործել, այդ անպայման կդառնա Մոսկվայի ու առհասարակ Ռուսաստանի հայության գլխավոր հոգեւոր-ազգային կենտրոնը: Բարեբախտաբար հայերս չենք կորցրել ակնածանքը մեր եկեղեցու հանդեպ եւ դրա պերճախոս վկայությունը մեկենասների ու բարեգործների նվիրյալ վերաբերմունքն է շինարարությանը. աջակցում են առավելագույնս: Մի գաղտնիք պատմեմ: Երբ նորերս Հայաստանի վարչապետը այցելեց այդ համալիր ծանոթանալու շինարարության ընթացքին, շատերն «աղոթում էին», որ հանկարծ նրան չտրտնջեն Մոսկվայի կառավարության ղեկավարները: Մի բան է նախագիծը, որ նրանք հասատել են, եւ բոլորովին այլ բան ներկա շինարարության հիրավի տպավորիչ մասշտաբները: Մտավախություն կար, որ հիշյալ անձանց մեջ կարող են լինել նաեւ անբարյացակամ, կոպիտ ասած՝ նախանձ մարդիկ (հատկապես՝ ոչ ռուս): Ի վերջո, եթե չեմ սխալվում, այս հոգեւոր օջախը իր մեծությամբ Մոսկվայում կլինի երկրորդ խոշոր քրիստոնեական եկեղեցական համալիրը ռուսական Քրիստոս Փրկչի մայր տաճարից հետո:

Բարեբախտաբար, Աստված լսեց հայերիս ձայնը...

Հարցազրույցը վարեց
Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

«Բրիտանիայի արտգործնախարարության դոսիեները թուրքական պատերազմի հանցագործների մասին»

Թուրքիայում հրատարակվել է Վարդգես Եղիայանի գրքի թուրքերեն տարբերակը

Թուրքիայում լույս է տեսել Վարդգես Եղիայանի «Բրիտանիայի արտգործնախարարության դոսիեները թուրքական պատերազմի հանցագործների մասին» գրքի թուրքական տարբերակը: Այն հրատարակել է Ռաջիփ Զարոֆլուն, որն այդ քայլին է դիմել անտեսելով անգամ Թուրքիայի բեական օրենսգրքի 301-րդ հոդվածի պահանջները: Նշենք նաեւ, որ որոշ ժամանակ առաջ թուրք ազգայնականները պայթեցրել էին Ռ. Զարոֆլուի հրատարակչատունը:

Ինչպես տեղեկացրին Լոս Անջելեսում գործող «Հայոց հիշողության կենտրոնից», գիրքը ներկայացնում է այն դոսիեների մանրամասները, որոնք բրիտանացիները հավաքել էին երիտթուրքերի ամբողջ ռեժիմը հետաքննելու նպատակով: Զինադադարից անմիջապես հետո բրիտանացիներն անպատասխան «գրոհներ» էին իրականացրել Կոստանդնուպոլսում եւ ձերբակալել էին Հայոց ցեղասպանության ծրագրման եւ իրականացման մեջ կասկածվողներից շատերին: Կասկածյալներն այնուհետեւ տեղափոխվել էին Մալթա՝ սպասելով իրենց դատավարությանը: Բրիտանացիները, այնուամենայնիվ, Սոսուլի նավթային հարստությունները ավելի կարեւորելով, շտապով կորցրել էին Հայկական հարցի վերաբերյալ հետաքրքրությունը եւ ազատ էին արձակել պատերազմի հանցագործներին՝ կնքելով բանտարկյալների փոխանակման գործարք:

Պոլսում 1921-ին Բրիտանիայի գեռագույն հարցերով պատասխանատու Հերբերտ Լեմբն այս ամբողջ անարդար խառնաշփոթը նկարագրել էր հետեւյալ կերպ. «Քանի դեռ դաշնակիցների շրջանում գոյություն ունեն լիակատար համագործակցություն եւ կամք՝ դատավարությունները կտարալվեն, իսկ շուրջ մեկ միլիոն քրիստոնյաների ոտղակի եւ անոտղակի ջարդերն անհետեւանք կմնան: Ավելի լավ կլիներ, եթե դաշնակիցներն այս հարցով երբեք հայտարարություններ չանեին եւ այդ հայտարարություններին չհետեւեին ձերբակալություններն ու արտաքսումը, ինչպիսիք եղան»:

Գրքի թուրքերեն հրատարակության նախաբանի հեղինակ, մարդու իրավունքների պատասխանատուության ակտիվիստ Սայիդ Չեթինօղլուն պնդում է, որ Մալթայի դոսիեները, առանց որեւէ կասկածի, ամբողջացնում են Հայոց ցեղասպանության փաստը բացահայտող ամենակարեւոր փաստաթղթերը: «Սա մեր ոչ վաղ անցյալի պատմության կարեւորագույն դրվագներից է, որը չնայած ճշմարտություն է, սակայն մենք չենք ցանկանում ընդունել: Փաստորեն, 1915-ի դեպքերի ճշմարտությունը բացահայտելու համար անհրաժեշտ է ադեկվատորեն Թուրքիայի Հանրապետության հիմնադրման հույժ գաղտնի պահված դրվագները», գրել է նա: Թուրք պատմաբանի ներկայացմամբ, 1915-1923-ի, այսինքն՝ ներկայիս թուրքական պետության հիմնադրման փաստաթուղթ հանդիսացող խոշոր խորհրդաժողովների (բեական օրենսգրքի 301-րդ հոդված) թուրքերի համար դարձել է հետազոտման ամենադժվար ոլորտը: Ըստ նրա՝ Մալթայի փաստաթղթերը շատ կարեւոր են, քանի որ հստակեցնում են այդ անցումային շրջանը:

Սայիդ Չեթինօղլուն հավաստիացնում է նաեւ, որ այդ դոսիեներից պարզ է դառնում, որ պատերազմի հանցագործներից շատերը վերադարձել են Թուրքիա եւ դարձել են ներկայիս թուրքական հանրապետության «հիմնադիր հայրերը»:

Վարդգես Եղիայանը, որը նաեւ «Նյու Յորք լայֆ» եւ «Ավսա» ադահովագրական ընկերությունների դեմ Հայոց ցեղասպանության զոհերի իրավահաջորդների անունից դատական գործընթացը շահած երեք փաստաբաններից մեկն է, իր հիացմունքն է հայտնել, որ ի հեռուստ 301-րդ հոդվածի, Թուրքիայում խիզախ թուրքեր կան, ովքեր ընդդիմանում են իրենց պատմությանը: «Հուսով եմ, որ 301-րդ հոդվածի պահանջներով հրատարակիչներին եւ թարգմանիչներին դատապարտելու փոխարեն թուրք մտավորականությունը պատրաստակամ կլինի հսկայ ուղեղով ընդունելու կատարվածը», ասել է Եղիայանը:

ՄԵՔԻՐԻՆՈՒՀԻ ԳԵՂԱՄՅԱՆ

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ

Բարձրորէն գնահատուեցաւ Ճորճ Մանսուեանը

Հարաւային Կալիֆորնիոյ հայ համայնքներուն ծառայութեան նուիրուած ակնառու անձնաւորութիւններէն մէկն է Գէորգ Ճորճ Մանսուեանը, որու կիսադարեայ վաստակին նուիրուած մեծարանքի հանդիսութիւնը տեղի ունեցաւ վերջերս, ԹՄՄ Արշակ Տիգրանեան վարժարանի «Ուլթր եւ Լորլ Գարաղեան» սրահին մէջ:

Ճաշկերոյթ-հանդիսութեան սկիզբը, առաջնորդ սրբազան Յովնան արք Տէրտէրեան, կողին ունենալով Տաճատ ծայրագոյն վարդապետ Եարմէեանը, կատարեց հայրապետական կոնդակի եւ «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շաբաթի յանձնումի արարողութիւնը:

Յայտագիրի վարիչ Բարսեղ Գարթալեան, մեծարեալին 35 տարիներու բարեկամն ու գործակիցը, բնախնդութեամբ գործադրեց պատշաճ յայտագիր մը, մեծարեալին ամբողջական արդարութիւն ընելով:

Հետեւելով Մանսուեանի գիտակցական կեանքի ուղիին, Գարթալեան ներկայացուց

սաղմնահայ մասը Մանսուեանի գործունէութեան, ապա հրափրեց Մարէն Արշակունին, որ արտայայտուեցաւ Մոնթրէալոյի մէջ կառուցուած Ցեղասպանութեան յուշարձանին Մանսուեանի բերած օրինակելի մասնակցութեան: Խօսք առաւ Վահէ Սեմերճեան՝ հանդիսութեան գործադիր յանձնախումբին ատենադիրը, որ ներկայացուց Ճորճ Մանսուեանի շնորհակալ նոպասը Թէֆէեան մշակութային միութեան՝ անոր կազմատրամէն մինչեւ օր, եզրակացնելով որ Մանսուեան իրատւմը շահած է միութենական սերնդափոխութիւն մը ծրագրելու եւ իրագործելու: Տիգրանեան վարժարանի երջանաւարտ Արմինէ Շաքլեան շատ կարճ ելոյթով շնորհակալութիւն յայտնեց Մանսուեանին՝ հայրական հոգածութեան համար զոր ցոյց տուած է միութեան սեփականութիւնը եղող վարժարանին հանդէպ:

Գնահատագիրներու շարքին էին Կալիֆորնիոյ Եսեմլիի անդամ Փոլ Գրիգորեանի ներկայացուցածը՝ նահանգային խորհրդարանին կողմէ, Ռամկավար ազատական կուսակցութեան Կեդրոնական վարչութեան պատշաճ եւ երախտագիտական գնահատանքի նամակը՝ զոր կարդաց Գարթալեան, եւ Թէֆէեան մշակութային միութեան Կեդրոնական վարչութեան գնահատականը ուղղուած վարչութեան երկարամեայ փոխատենադիրին: Կարդացուեցաւ նաեւ վարժարանի բարեւար եւ բարեկամ Ուլթր Գարաղեանի դիպուկ մէկ գնահատականը՝ Մանսուեանը բնութագրող որպէս իտայատուկ հասարակական գործիչ. տարբեր՝ հրապարակը աղմկող պատահականներէն:

Երաժշտական երկու ելոյթները, մին սրնգահար Սալբի եւ Սօսի Քերոնեաններուն, միւսը՝ սոպրանօ Անահիտ Ներսիսեանի ու Լեւոն Աբրահամեանի կողմէ, յայտագիրին տուին արհեստավարժական յաւելեալ մակարդակ:

Շնորհակալութեան խօսքը՝ կռապատուած, հատու եւ զուարթ արտայայտութիւն մըն էր տրուած Ճորճ Մանսուեանի կողմէ: Հայրապետական կոնդակին առիթով իր անկեղծ շնորհակալութիւնը յայտնելէ ետք, Մանսուեան իր գործունէութեան մասին համեստ կարծիքով բաւականացաւ, շեշտը դնելով իրագործուածին օգտակարութեան վրայ:

Հանդիսութեան առիթով հրատարակուած յիշատակի գիրքը բարձրորէն գնահատելի էր: Մանսուեանի տարիներու գործակիցներուն անկեղծ վկայութիւններուն կողքին գիրքին մէջ տեղ գտած էր Մանսուեանի գրած ինքնակենսագրութիւնը՝ անգլերէն եւ համեմուած՝ բազմաթիւ լուսանկարներով:

Արժանի գնահատական մըն էր հանդիսութիւնը նուիրուած մարդու մը, որ ազգային գիտակցութիւնը վերածած է դրական իրագործումներու օղակներով երկար շղթայի մը: Կազմակերպիչները յաջողեր էին Մանսուեանի ճաշակին եւ ակնկալութեան ճիշդ գիծը գտնել յայտագիրին պատրաստութեան ընթացքին. 200-է աւելի հիւրերուն ներկայութիւնը եւ ԹՄՄ Արշակ Տիգրանեան վարժարանին ի նպաստ կատարուած նուիրատուութեանց գումարը կու տան յաջողութեան վկայութիւնը:

ԲԱՐՍԵՂ ԳԱՐԹԱԼԵԱՆ,
Լոս Անջելես

Անդառնալի են Հայոց ցեղասպանության ճանաչումն ու PKK-ի զինված ոյժերը

Թերեւս դա է ստիպում Անկարային, որ լուծումից խուսափելու համար հարցերից մեկը հակադրի մյուսին

Ինչպես նախորդ համարում նշել էր **«Ազգը»**, հոկտեմբերի 17-ին դռնփակ նիստում Թուրքիայի ազգային մեծ ժողովը ձայների 507 կողմ, 19 դեմ հարաբերակցությամբ Հյուսիսային Իրաքում PKK-ի դեմ ռազմական գործողություններ ծավալելու լիազորություն էր տվել վարչապետ Էրդողանի կառավարությանը: Միաժամանակ նշվել էր ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի հայտարարության մասին, որտեղ նա ասել է. «Իրաք զորք ուղարկելը Թուրքիայի շահերից չի բխում: Թուրքիան այնտեղ արդեն զորամասեր ունի տեղակայված»:

ԱՄՆ նախագահին հավելել են Պենտագոնի խոսնակ Ջեֆ Մորելն ու պետքարտուղարության խոսնակ Թոմ Քեյսին: Մորելն ասել է. «Թուրքերն, ինչ խոսք, հիասթափված են եւ զայրացած: Սակայն չեմ կարծում, որ հակված լինեն հաջորդ քայլի կատարմանը: Այդ քայլը հույժ կարեւոր հետեւանքներ է ունենալու ոչ միայն մեզ, այլեւ թուրքերի համար»: Միաժամանակ նա ընդգծել է, որ 90-ականների վերջերին ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, թուրքերը Հյուսիսային Իրաքում ունեն 2-3 գումարտակ:

Քեյսին նախ ողջամտության կոչ է արել Անկարային, ապա եւ նշել. «Չենք ուզում տեսնել միակողմանի կատարված ռազմական որեւէ քայլ, որովհետեւ համոզված չենք, որ դա կնպաստի հարցի լուծմանը: Ընդհակառակը, դրանով էլ ավելի կբարդանա սպառնալիքների ու դժվարությունների հաղթահարումը»:

ԱՄՆ-ի մոտեցումը պաշտպանել է նաեւ Եվրամիությունը: Եվրոպական այս կառույցը, ի դեմս Եվրահանձնաժողովի նախագահ Ժոզե Մանուել Բարոզոյի, Էրդողանի կառավարությանն է դիմել Իրաք ներխուժելու մտադրությունից հրաժարվելու եւ որպես հարցի լուծման միջոց երկխոսությունն ընտրելու կոչով: Հյուսիսային Իրաք ներխուժելու թուրքական կառավարության մտադրություններին հակադրվել է նաեւ Արաբական լիգայի գլխավոր քարտուղար Ամր Մուսան, մատնանշելով, որ դա չի բխում ժամանակի պահանջներից: Բաղդադի վարչակարգը, Հյուսիսային Իրաքի իրական կառավարությունն անընդունելի են համարել Թուրքիայի ազգային մեծ ժողովի PKK-ի առնչությամբ ընդունած որոշումը:

Վարչապետ Էրդողանն, ի պատասխան նախագահ Բուշին, նախ ասել է, որ կարեւորը Թուրքիայի ազգային մեծ ժողովի որոշումն է, ոչ թե ուրիշների ասածը, ավելացնելով. «Այս որոշումը դեռեւս չի նշանակում անմիջապես ռազմական գործողություններ սկսել Իրաքի տարածքում»: Ապա նա Իրաքի փոխնախագահ Հաշիմիից եւ վարչապետ Մալիքիից պահանջել է ձերբակալել եւ Թուրքիային հանձնել Հյուսիսային Իրաքում տեղակայված PKK-ի երեք առաջնորդների, զգուշացնելով. «Եթե, իհարկե, չեք ուզում, որ ներխուժենք Իրաք: Այլապես կդիմենք ռազմական գործողությունների»:

Թուրքական «Միլիեթը», տեղեկացնելով այդ մասին, միաժամանակ նշում է, որ վարչապետ Էրդողանը նոյեմբերի 5-ին Վաշինգտոնում PKK-ի առաջնորդների հանձնման հարցը կբարձրացնի նախագահ Բուշի հետ հանդիպմանը: ԱՄՆ նախագահը ինչպե՞ս կարձագանքի Թուրքիայի վարչապետին, ցույց կտա ժամանակը: Բայց որ PKK-ն իրական հարցի ծնունդ է Թուրքիայում եւ կազմակերպության ղեկավար կազմի երեք անդամների հանձնումը հազիվ թե դադարեցնի վերջին զինյալ ոյժերը, առավել եւս՝ լուծում կբերի հարցին, ակնհայտ է:

Ըստ երեւույթին, այս ճշմարտությունը գիտակցում են Թուրքիայի գործադիր եւ օրենսդիր իշխանությունները, որ Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւի ընդունումը փորձում են հակադարձել Հյուսիսային Իրաքում PKK-ի դեմ ռազմական գործողություններ ծավալելու պատրաստակամությամբ կամ այս կազմակերպության երեք առաջնորդներին հանձնելու պահանջով: Այս պայմաններում վերոհիշյալ պատրաստակամությամբ ու պահանջով արտահայտված հակազդեցությունը ինքնաբերաբար դառնում է կամակորության դրսեւորում:

Քանի որ բանաձեւն ընդունել է ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը, իսկ թուրքական հակազդեցությունը հասցեագրված է Բուշի վարչակարգին, որն ամեն կերպ փորձել է կասեցնել բանաձեւի ընդունումը, ուստի խախտվում է նաեւ հակազդեցության եւ հասցեատիրոջ համարժեքությունը: Էլ չենք խոսում այն մասին, որ Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւը չի կարող որեւէ առնչություն ունենալ PKK-ի զինված պայքարի հետ Թուրքիայում: Թուրքական կամակորությունը նախաձեռնությունների անհամաչափության հետ համադրելու դեպքում ակնհայտ է դառնում PKK-ի պայքարի եւ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման անդառնալիության գիտակցումը պաշտոնական Անկարայում: Թերեւս դա է պատճառը, որ թուրքական իշխանությունները հարցերի լուծումից խուսափելու համար առանց համաձեղելիությունը հաշվի առնելու փորձում են դրանցից մեկի միջոցով չեզոքացնել մյուսը:

ՀԱՍԿՈՒ ՉԱՔԱՐՅԱՆ

Բիուտն վերադարձավ հայրենիք

Ութ տարվա տարագրությունից հետո Պակիստանի նախկին վարչապետ Բենազիր Բիուտն երեկ Դուբայից վերադարձել է հայրենիք: Կարաչիի օդանավակայանում եւ քաղաքում նրան մեծ խանդավառությամբ դիմավորել են բյուրավոր համակիրներ: Ոստիկանության տվյալներ վկայակոչելով՝ Ֆրանսպրեսը հաղորդում է, որ Կարաչիում եւ օդանավակայանի ճանապարհին մոտ 250 հազար պակիստանցիներ նախկին վարչապետին դիմավորել են 6 կիլոմետրանոց կենդանի շղթա կազմած:

Իշխանությունները ձեռնարկել էին անվտանգության արտակարգ միջոցներ: Բիուտոյին պատշտպանելու էին ուղարկվել 20 հազար ոստիկաններ: Տիկին Բիուտն, հայտարարել է, որ ինքը չի վախենում ահաբեկչությունից, թեեւ «Թալիբան» շարժումը եւ «Ալ Ղաիդան» մահվան են կոչել նախագահ Մուշարաֆի եւ իր նկատմամբ:

Ավելի քան ութ տարի առաջ կատաղի ընդդիմության ամբաստանությամբ դատական հետապնդում էր սկսվել Բիուտոյի նկատմամբ, նա հեռացվել էր երկրից: Հաղորդվում է, որ ներկայումս ամբաստանությունը վերացված է:

«Ազգն» արդեն գրել է, որ Բիուտոն Պակիստան է վերադառնում նախագահ Մուշարաֆի հետ իշխանությունը կիսելու: ԱՄՆ-ը օժանդակում է Մուշարաֆ-Բիուտո բանակցություններին, քանի որ նախագահի վարկը վերջերս զգալիորեն ընկել է իսլամիստների դեմ պայքարելու անկարողության պատճառով: Բացի դրանից, գեներալ Մուշարաֆը նաեւ բանակի ղեկավարն է, ինչը երկրում լուրջ դժգոհության տեղիք է տալիս: Սա է պատճառը, որ օրերս կայացած նախագահական ընտրություններում Մուշարաֆի տարած հաղթանակը առայժմ պաշտոնապես չի հայտարարվում:

«Ես վերադառնում եմ փոփոխության նպատակով եւ ժողովրդավարության ավելի լավ ապագայի հույսով», երեկ հայտարարել է Բիուտոն: Նա երկու անգամ վարչապետ է եղել՝ 1988-1990 եւ 1993-96 թթ.: Ենթադրվում է, որ Բիուտոն Մուշարաֆի հետ կկազմի քաղաքական դաշինք եւ կնպաստի երկրի ժողովրդավարացմանը:

Սոմալիի կառավարական զորքերը գրավել են ՄԱԿ-ի գրասենյակը

Սոմալիի մայրաքաղաք Մոգադիշոյում կառավարական զորքերը գրոհով ներխուժել են ՄԱԿ-ի գրասենյակ եւ ձերբակալել պարենի բաժանմունքի ղեկավար Իդրիս Օսմանին:

ՄԱԿ-ի այդ ծրագրի մամլո քարտուղար Պիտեր Սմերդոնը Ռոյթեր գործակալության թղթակցին ասել է, որ իր կազմակերպությունը ձերբակալության փաստի կապակցությամբ բանակցում է Սոմալիի իշխանությունների հետ:

Ծրագրի ներկայացուցիչներն անցյալում քանիցս գանգատվել են, որ կառավարական զորքերի եւ իսլամիստների զինված կազմավորումների բախումները խոչընդոտում են մարդասիրական օգնության մատակարարումներին:

2007-ի սկզբներին կառավարական զորքերը Մոգադիշոյից դուրս էին մղել «Իսլամական դատարանների միություն» խմբավորման գրոհայիններին, բայց մի շարք նահանգներում իսլամիստները շարունակում են ռազմական գործողությունները:

Պ. Ք.

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՄԱՄՈՒԼ

Մտահոգություն բանաձեւի նկատմամբ

Սոիտակ տան եւ Թուրքիայի հաստատ եւ լավ գործակցված քայլերը կարծես թե իրենց սպասված արդյունքը տալիս են: «Նյու Յորք թայմս» թերթի հոկտեմբերի 17-ի համարում տպագրված «Ներկայացուցիչների պալատում Ցեղասպանության բանաձեւի աջակիցների թիվը նվազում է» վերնագրով հոդվածում Կալիֆորնիայից հանրապետական Ռոնի Հերգերը, իսկ նույն նահանգից դեմոկրատ Բրադ Շերմանը, կարծես ավելի դիպուկ բնորոշելով իրադրությունը, ավելացրել է. «Ահա թե ինչ տեղի կունենա, երբ պայքարես բազմամիլիոն դոլար արժողությամբ արտավի դեմ: Ով էսեսել, որ ընկերներն սպառնան միմյանց»:

Թերթը նաեւ նշել է, որ երեքշաբթի օրը նախագահ Բուշն ու խոսնակ Փելոսին անկեղծ զրույց են ունեցել իրար հետ: Ներկայումս դեմոկրատները փորձում են գնահատել իրավիճակը նախքան լիագումար նիստին ներկայացնելու վերջնական որոշում ընդունելը:

«Մենք պետք է հստակ իմանանք, թե յուրաքանչյուրը ինչ դիրքորոշում ունի», բացատրել է մեծամասնական առաջնորդ Սթենիս Հոյերը Մերիլենդից:

Արկանզասից դեմոկրատ Մայք Ռոսը մասնավորապես ասել է, թե «լավ որոշում է, սակայն ժամանակը բոլորովին հարմար չէ»: «Ինչքան էլ ճիշտ լինեն, չենք կարող թույլատրել, որ անցյալի կսկիծները խափանեն նոր վայրագությունները կանխելու մեր ջանքերը», իր հերթին նշել է Կալիֆորնիայից հանրապետական Ռոնի Հերգերը, իսկ նույն նահանգից դեմոկրատ Բրադ Շերմանը, կարծես ավելի դիպուկ բնորոշելով իրադրությունը, ավելացրել է. «Ահա թե ինչ տեղի կունենա, երբ պայքարես բազմամիլիոն դոլար արժողությամբ արտավի դեմ: Ով էսեսել, որ ընկերներն սպառնան միմյանց»:

Թերթը նաեւ նշել է, որ երեքշաբթի օրը նախագահ Բուշն ու խոսնակ Փելոսին անկեղծ զրույց են ունեցել իրար հետ: Ներկայումս դեմոկրատները փորձում են գնահատել իրավիճակը նախքան լիագումար նիստին ներկայացնելու վերջնական որոշում ընդունելը:

«Մենք պետք է հստակ իմանանք, թե յուրաքանչյուրը ինչ դիրքորոշում ունի», բացատրել է մեծամասնական առաջնորդ Սթենիս Հոյերը Մերիլենդից:

Հ. Ծ.

Նախկին նահանգապետ Դոմենջյանի դիմումը Կոնգրեսին

Կալիֆորնիայի նախկին նահանգապետ Ջորջ Դոմենջյանը իր մտահոգությունն է հայտնել բանաձեւի վերաբերյալ, նշելով դրա անցկացման անհրաժեշտությունը: «Դարֆուրում շարունակվող իրադարձություններին հետեւելը ինձ հիշեցնում է իմ անձնական պատմությունը: Ծնողներս եւ կնոջս ծնողները ստիպված էին հեռանալ իրենց ծննդավայրից 20-րդ դարի առաջին ցեղասպանության պատճառով: 1915-23 թթ. Օսմանյան Թուրքիայի կառավարությունը փորձեց ոչնչացնել հայ բնակչությանը: Սա հաստատված փաստ է, որի վկայությունները կարելի է գտնել Մ. Նահանգների ազգային արխիվներում», շեշտել է նա Կոնգրեսին ուղղված իր երկար նամակում:

Հ. Ծ.

Եվրոպայում հակահրթիռային համակարգի տեղադրումը կարող է ընդհատվել

Բուշ. «Իրանում միջուկային զենքի ստեղծումը կլինի 3-րդ աշխարհամարտ»

ԱՄՆ-ը Ռուսաստանին առաջարկել է Արեւելյան Եվրոպայում հակահրթիռային համակարգի ծավալման կասեցում, մինչեւ երկու երկրները խոստովանեն իրանական սպառնալիքի գոյությունը: Այդ մասին տեղեկացնում է Լոնդոնի «Ֆայնենշլ թայմս» թերթը: Նշելով, որ նման առաջարկություն են արել պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը եւ պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսը Մոսկվայում նախագահ Վլադիմիր Պուտինի եւ արտգործնախարար Սերգեյ Լավրովի հետ հանդիպման ժամանակ:

Հանդիպումից հետո Ռայսն ասել է, որ Եվրոպայում ամերիկյան հակահրթիռային համակարգի տարրերի տեղաբաշխման շուրջը Մոսկվայում չի հաջողվել փոխհամաձայնության հասնել: Ռաքի համակարգը պետք է ստեղծվի Իրանից բխող վտանգի պատճառով:

Ամերիկյան կողմը նաեւ ցանկություն է հայտնել արեւելաեվրոպական հակահրթիռային համակարգի հետ մեկտեղ օգտագործելու Գաբալայի եւ Արմավիրի ռուսական ռադարները: Սակայն, ՌԴ ՀՈՒ գլխավոր շտաբի պետ Յուրի Բալուեւսկու խոսքերով, ամերիկացիների տվյալ առաջարկն անընդունելի է Մոսկվայի համար:

ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական գործերի գծով օգնական Դենիել Ֆրիդը իր հերթին Բրյուսելում հայտարարել է, որ եվրոպական հակահրթիռային համակարգի նկատմամբ ԱՄՆ-ի մոտեցումը կարող է փոխվել, եթե Իրանը հրաժարվի ուրանի հարստացումից: Այդ մասին նա ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում խոսել է ՌԴ արտգործնախարարի եւ պաշտպանության նախարարի հետ հանդիպման ժամանակ:

Ֆրիդի խոսքերով, ԱՄՆ-ին մտահոգում է «ոչ թե Ռուսաստանը, այլ Իրանը»: BBC-ն հիշեցնում է, որ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը երեքշաբթի օրը Թեհրանում հայտարարել էր, որ ինքը տեսնում է հակահրթիռային պաշտպանության համակարգի հարցում «ԱՄՆ-ի դիրքորոշման փոփոխման հնարավորություն»:

Արեւմուտքը փորձում է Իրանին համոզել սեփական միջուկային ծրագրի շուրջը բանակցություններ սկսել ԿԺԴՀ-ի օրինակով: Իրանցիները պնդում են, որ իրենց միջուկային ծրագիրը խաղաղ է, բայց Արեւմուտքը վախենում է, որ Իրանի ուրանային ցենտրիֆուգները կարող են օգտագործվել ոչ միայն վառելիքի, այլեւ ատոմային ռումբի արտադրության համար:

Նախագահ Ջորջ Բուշը երեկ Վաշինգտոնում կազմակերպված մամլո ասուլիսում հայտարարեց, թե Իրանում միջուկային ռումբի ստեղծումը կարող է 3-րդ աշխարհամարտի սկիզբը դառնալ:

Պուտինը Թեհրանում նախագահ Ահմադինեժադի հետ հանդիպման ժամանակ շարադրել է իրավիճակի հարթմանն առնչվող սեփական տեսակետ, որի մանրամասնությունները, սակայն չեն հրապարակվում: Բուշը ցանկություն է հայտնել տեղեկանալու Թեհրանի բանակցությունների մանրամասնություններին:

Միջազգային դիտորդները ենթադրում են, որ ԱՄՆ-ը կարող է Եվրոպայում հակահրթիռային համակարգի տարրերի տեղաբաշխումը անորոշ ժամկետով հետաձգել, եթե Ռուսաստանն Իրանի հարցում առավել համերաշխ լինի Արեւմուտքի հետ:

ՄԱԿ-ի ԱԽ-ում Ռուսաստանը մինչեւ օրս դեմ է արտահայտվել հակահրանական պատժամիջոցների խստացմանը:

Իրանցիների միջուկային ծրագիրը մտահոգում է ոչ միայն ԱՄՆ-ին, այլեւ նրա դաշնակից Իսրայելին: ՌԻԱ գործակալության տվյալներով, վերջին օրերին ԱՄՆ Կոնգրեսի մի շարք հանձնախմբերում դռնփակ քննարկվում է Պարսից ծոցի եւ Իրանի իրավիճակը: Վաշինգտոնում երեքշաբթի օրը Պենտագոնի ղեկավար Ռոբերտ Գեյթսի եւ Իսրայելի պաշտպանության նախարար Եհուդ Բարաքի բանակցությունների ժամանակ որոշվել է համատեղ ուժերով Իսրայելում ստեղծել հակահրթիռային պաշտպանության բազմաշերտ համակարգ:

Հայաստանին՝ վրշնով եւ գրչով...

Ասուլիս Զարեհ Մուքաֆյանի ցուցահանդեսից առաջ

Հեսեղեռնյան առաջին սերնդի այն ներկայացուցիչներից է Զարեհ Մուքաֆյանը, որոնք մեր ժողովրդի համար ծանրագույն ճգնաժամում կարողացան պահպանել հայ ոգին: Նրանք նախ եւ առաջ գրչի ու մշակույթի մարդիկ էին: 1915-ի ջարդերից փրկված 8-ամյա Զարեհը եվրոպական հողում գտավ իր երկրորդ ծնունդը: Սովորեց իտալացի վարժեսների մոտ, ապա իր գեղանկարչական արվեստը զարգացրեց ու հարստացրեց Ֆրանսիայում: Մտքի ու սրտի մարդ էր նա՝ իր հոգու վերադրումներն արտահայտեց վրձնի ու գրչի լեզվով: 1000-ից ավելի նկարչական աշխատանքներ ունեցավ, մի քանի լուրջ արվեստաբանական ուսումնասիրություններ: Ցուցահանդեսներ կազմակերպվեցին Ֆրանսիայում, Իտալիայում, Ամերիկայում: Հայաստանյան առաջին ցուցահանդեսը 1967-ին՝ նկարչի տանը բացվեց: Նրա գեղանկարչության հայկական մասը գունային արտակարգ երանգներով է հարուստ, զգայական քանձր շերտերով: Հայաստանում Զարեհ Մուքաֆյանի աշխատանքները գտնվում են ազգային պատկերասրահում, Էջմիածնի եւ Գյումրիի պատկերասրահներում: Հետմահու նրա երրորդ ցուցահանդեսը կբացվի այսօր՝ ազգային պատկերասրահում: Այս առիթով Հայաստանում է գտնվում նկարչի որդին՝ Կլոդ Մուքաֆյանը: Երեկ այս առիթով «Ուրբաթ» ակումբում արվեստաբան **Շահեն Խաչատրյանի** եւ **Կլոդ Մուքաֆյանի** հետ կազմակերպվել էր լրագրողական հանդիպում:

Շահեն Խաչատրյանը ներկայացրեց Զարեհ Մուքաֆյանի արվեստն իբրեւ գունային հնչեղությամբ հարուստ, կոմպոզիցիոն պարզության, իրերի ու երեւույթների խոր դիտողականության արտահայտություն: «Մուքաֆյանի նկարելաոճը հարում է իմպրեսիոնիզմին, խոսում է ջերմ, հնչեղ գույներով: Գծանկարն ու գույնը նկարչի կտավներում հանդես են գալիս սերտորեն շաղկապված: Վրձնախվածքի ազատ խաղը կտավի հարթության վրա ստեղծում է արտահայտիչ կոմպոզիցիոն շարժում», գրում է Շահեն Խաչատրյանը նկարչի 100-ամյակի առիթով լույս տեսած կատալոգի առաջաբանում:

Պատմաբան, արվեստաբան Կլոդ Մուքաֆյանը կրթությամբ մաթեմատիկոս է, ազատ մտածողությամբ նրա պարզ ոճը չափազանց անկեղծ էր: Նա պատմում էր Հայաստանի հետ իր կապի, իր առաջին այցի մասին: Երբ հայրը առաջին անգամ ցուցահանդես ունեցավ, նրա գույները ու ոճը փոխվեցին: Դա առիթ եղավ փոխելու նաեւ որդու՝ Կլոդ Մուքաֆյանի ոչ միայն մասնագիտական ուղղվածությունը, նաեւ աշխատանքայինը: Զարեհ Մուքաֆյանը հորդորում է որդուն Երեւանում մաթեմատիկայի դասախոսություններ կարդալ: Ռուբեն Համբարձումյանի հետ իր ծանոթությունից հետո 80-ականներին 4 անգամ գալիս է Հայաստան: Այդ ընթացքում մահանում է հայրը, եւ նա վերադառնում է Փարիզ: Հայաստանում մշավորական էփումները իրեն աստիճանաբար ուղղորդում են պատմագիտության ոլորտ: Սկսում է լրջորեն զբաղվել Հայկական Կիլիկիայի պատմության ուսումնասիրություններով: Փարիզում կազմակերպում է երեք ցուցահանդես, առաջինը 90-ականներին, որին ներկա է եղել Ֆրանսիայի նախագահ Միտերանը, հայտնի կիլիկիագետ, Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը եւ Գարեգին Երկրորդը, երբ դեռ Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսն էր:

Կլոդ Մուքաֆյանը Ֆրանսիայում Հայաստանի տարվա 2 ամենախոշոր ցուցահանդեսներից մեկի՝ Մարսելի «Հայ գրերի մոգականությունը» փայլուն ցուցադրության մտահղացողը, նախաձեռնողն ու իրագործողն էր. այս գործում մեծ է եղել Շահեն Խաչատրյանի աջակցությունը: Պրն Մուքաֆյանը մի քանի նկատառումներ արեց եւ դրանք մանկական այնպիսի անկեղծությամբ հայտնեց, որ զարմանք հարուցեց՝ հարցերի տարափով: Ֆրանսիական կողմի որոշակի վերաբերմունքային տարբերությունը (անտարբերությունը), որը չէր կարող դրսեւորվել ասենք Գերմանիայի կամ Ճապոնիայի պես երկրների հանդեպ (շատ հասկանալի բան է): Մարսելի քաղաքապետի ցուցաբերած անհոգությունն իր կազմակերպած ցուցահանդեսի նկատմամբ, որն ինչպես ինքը գնահատեց շուրջ 400.000 եվրո արժողությամբ աշխատանք էր, սակայն ֆինանսական որեւէ աջակցություն չի եղել: Հայաստանի դեսպանատան աշխատառնում շատ դեպքերում բովանդակայինից առավել ձեւականին տեղ տալը (անուններ, աֆիշներ, տառաչափեր): Անհաջող է ներկայացվել հայ ժամանակակից կերպարվեստը եւ ձախողված կարելի է համարել Մ. Սարյանի ցուցահանդեսը: Առաջինում հանիրավի դուրս է մնացել հայ ժամանակակից կերպարվեստի հիմնադիրների՝ 60-ականների տաղանդավոր սերունդը, եւ հատկապես Մինաս Ավետիսյանը, որին Եվրոպայում ներկայացնելու հազվադեպ առիթ էր ընձեռվել:

Իսկ Սարյանը ներկայացվել է Փարիզի արվարձանային (Իսի լը Մուլինո) խաղաքարտերի մի ինչ-որ երկրորդական թանգարանում, այն դեպքում, երբ Սարյանի նախորդ երկու ցուցադրություններից մեկը եղել է Պիկասոյի թանգարանում եւ հաջորդը՝ Պոմպիդու արդի արվեստի հայտնի կենտրոնում: Կլոդ Մուքաֆյանն անդրադարձավ «Sacra Armenia» ցուցահանդեսային անվանման հայերեն սխալ թարգմանությանը: «Sacra»-ն հայերեն համարժեք է «սրբազան» բառին: Այնպիսի բազմաթիվ մեծ ու փոքր վրիպումներ եւ ճեղքեր...

«Հայաստանի տարին Ֆրանսիայում» ծրագրի մասին Երեւանում այնքան մեծ արձագանքներ եղան (տպագիր մամուլ, հեռուստատեսություն), որ զարմանալի է լրագրողական անտեղյակությունը վերոհիշյալ հարցերին: Եթե պատշոնական հաղորդագրությունը, սովորաբար, շրջանցում է նման երեւույթների (կառավարական միջոցառումների) թերությունները, եւ եթե ընդդիմադիր մամուլն էլ անկարեւոր է սրանք համարում, միեւնույն է՝ այդ մասին տարբեր միջավայրերում շատ է խոսվել եւ զարմանալի է, որ անգամ «Ազատություն» ռադիոկայանի ներկայացուցիչն անտեղյակ էր այդ բաներին: Եվ անտեղի էր հատկապես Կ. Մուքաֆյանին ուղղված, նրա խոսքն ընդհատող հարցերի տարափը: Հայ ներկա իրականությանը ֆիլ թե շատ ծանոթ մեկին հայտնի է, թե հիմնականում ինչպես են հարցերը կարգավորվում պետականության զգացողության պակասի այսքան ավելցուկով մեր երկրում:

Ֆրանսիականի բնույթին մենք ծանոթ չենք: Մեծ երկրներին առհասարակ կայսերապաշտությունը միշտ էլ բնորոշ է:

ՄԵԼՈՆԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՀԱՐԱՑԱՐՈՒՅՑ

«Մենք հաճախ չենք նկատում կյանքի գեղեցկությունը»

Վկայում է Ներսես արք. Պողոսպեկյանը

- Հեթանոսությունը ամբողջ աշխարհում արդեն սպառել էր իրեն, բայց ինչո՞ւ հայերը հատկապես քրիստոնեությունը ընդունեցին:

- Հայերը բազմաստվածային կրոն ունեին: Հելլենական, հունական ազդեցությամբ աստվածներ էին պաշտում: Նաեւ Արեւելյան Հայաստանում կրակն էին պաշտում որպես Աստված: Որովհետեւ կրակը այս ցուրտ երկրում տաքացնող լավագույն միջոցն էր: Եվ կրակը նաեւ սկիզբն է կյանքի, մեծագույն կրակն է, որ շողում է երկնքից: Արեւի շողերը լավագույն աղբյուրներն են, որ մեզ սնուցում եւ մեր կյանքը երկարաձգում են: Եվ այնուամենայնիվ ինչո՞ւ հայերը դարձան քրիստոնեության:

Միաստվածության գաղափարով իրենք էլ էին արդեն հասունացել: Սրա կոմպոզիցիան տեսան, որ իրենց հավատքը ամրապնդում է: Բայց նոր կրոնը (քրիստոնեությունը) շատ կարեւոր էր այն առումով, որ մարդասիրություն, զոհողություն, սեր էր ներշնչում:

Ոչ մի կրոնի առաջնորդ իր անձը չի զոհել ժողովրդի հավատքի, իր հետեւորդների համար, բացի Քրիստոսից: Իր արյունը թափեց խաչի վրա: Արյուն թափելով նա փրկություն բերեց ժողովրդին, հավատացողին: Եվ ամեն մի հավատացյալ, որ հավատում է աստենական եւ անդենական կյանքին: Մյուս կրոնները ասդենական կյանքի տահմաններն էին տալիս իրենց: Միայն տալիս էին, որ այս կրոնը կարող է քեզ երջանկություն պարգեւել այս կյանքի ընթացքում: Բայց հիմնականը քրիստոնեության մեջ հավիտենական, լույս աշխարհի կյանքն է, որը ավելի հարատեւ է, խոսքումնալից եւ սպասումների պատճառ է դարձնում այս կյանքի ընթացքում: Երբեմն մենք մտածում ենք, թե ինչո՞ւ գնանք զոհողության, սիրենք մեզ նմանին, օգնենք աղքատին, ելնելով մարդասիրությունից, մեր կյանքը զոհենք հանուն հայրենիքի: Այս բոլորի հետեւում կանգնած է հավիտենականությունը, որը վեհագույն գաղափար է: Ինչպես Քրիստոս իր մահվամբ հաղթեց, ամեն մի քրիստոնյա էլ (եթե ճշմարիտ քրիստոնյա է) հավիտենական կյանք կունենա:

- Դուք հավատո՞ւմ եք հավիտենական կյանքի գոյությանը:

- Անպայման: Առանց հավիտենական կյանքի հավատքի ես չեմ կարող ապրել այս աշխարհի վրա, անիմաստ կլինի իմ կյանքը: Եվ անձնապահությունը ավելի ընդունելի վիճակ կարող է լինել, ով որ հավիտենական կյանքի նկատմամբ հավատ չունենա:

- Գերմանացի գիտնական Ֆրիդրիխ Յուրգենսոնը ձայնագրելով թռչունների ծլվլոցը հետաքրքրական մի փաստ հայտնաբերեց: Այդ ձայների մեջ լսվում էր իր մահացած մոր ձայնը, որն իրեն անունով էր դիմում: Հետազոտությունները ապացուցեցին այն: Փորձերը շարունակական էին եւ ամեն անգամ մարդկային ձայներ էին արձանագրվում: Ինչ կասեք այս մասին:

- Ես չեմ կարող ընդունել դա: Բայց կյանքի գեղեցկությունը, Աստծո ստեղծագործության կատարելությունը եւ ամենօրյա արեւի ծագումը, այս թռվածնի մարմությունը ծառերից եւ թռչունների ծլվլոցները մեր կյանքի երջանկության առիթներն են: Հաճախ մենք այդ չենք նկատում եւ կողքից անցնում ենք: Ամենագեղեցիկ սիմֆոնիան ո՞ր մեկն է: Այո, Բեթհովենը սիրում եմ, Մոցարտը՝ պատշում, Արամ Խաչատրյանի երաժշտությունը հոգեբանորեն մոտ է ինձ, սակայն երբ առավոտյան թռչունների ծլվլոցի սիմֆոնիան ես

լսում՝ աստվածայինն եմ վայելում այս բակում (Մայր աթոռի բակը):

- Դուք նշեցիք արեւի բարերար ազդեցության մասին երկրի կենսոլորտի վրա, լուսնի ներգործության մասին ինչ կասեք:

- Մարդը բնության ստեղծագործությունն է, կատարյալ ստեղծագործություն Աստծո միջոցով ստեղծված: Աստված ստեղծեց բնությունը, բոլոր կենդանիներին: Այո, Աստվածը ստեղծագործության տեր եւ պահպան, որպես այս ամենի ղեկավար ստեղծեց մարդ արարածին իր պատկերով: Ես հավատում եմ, որ այս աշխարհի բոլոր գեղեցկությունները, վայելքները, նրբերանգները, ծաղիկների բուրումը, գեղեցկությունը, թռչունների սիմֆոնիան մարդու համար է ստեղծված: Մարդուն է տրված Աստծո կողմից այդ շնորհը տեսնելու եւ վայելելու այդ բոլորը: Բայց տեսեք մարդու հոգու մեջ ով է նստած՝ բարին, թե՞ չարը: Եթե բարին է նստած, այս բոլոր վայելքը իրեն համար է, եթե չարը՝ դժոխքի կրակն է իրեն համար:

ԱՐԱՅ ԱՐՇԱԿՅԱՆ

«Էությամբ պոռթկուն եմ, անհանգիստ, մի քիչ էլ խենթ: Ինչ-որ բան ասելու համար բավական է մտածել, ունկնդրել, թույլ տալ արտահայտվել: Միակ անհնարը մարդու համար լռելու անհնարինությունն է: Սուտ եմ մարդկային լռությունը: Իմ կտավներում կա դրամա, ասես փոքրիկ ներկայացումներ լինեն, յուրաքանչյուր կտավ իմ ինքնադիմանկարն է»:

Մարդկային հոգու պոռթկումներ «Մհեր Աբեղյան» թանգարանում

Օրերս էջմիածնի Մհեր Աբեղյան թանգարանում տեղի ունեցավ վրացահայ նկարիչ Մարտիրոս Մորյանի անհատական ցուցահանդեսը: Ցուցահանդեսի հիմքում ընկած է համամարդկային արժեքների թեման: Ստեղծագործությունների գաղափարը ընդգրկունությունն է՝ երկխոսության, զույգի, հայացքի էփման եւ այլնի միջոցով: Նրա գեղանկարչությունը երկխոսության, մեղմ երաժշտության ու ռոմանտիկ սիրային պոեզիայի միահյուսումն է, որն ազդում է մարդկային երեւակայության վրա, ստեղծում ներդաշնակություն:

Մորյանի կտավներում գերիշխում են կանաչ եւ ոսկեգույն գունատարները: «Գույների ընտրությունը պատահական չէ, սա իմ ներքին էությունն է, արտահայտվելու հրաշալի ձեւ: Եվ ընդհանրապես այս աշխարհում պատահական ոչինչ չկա: Ցեմ հավատում պատահականությանն ու ճակատագրին, թերեւս այն պատճառով, որ յուրաքանչյուր իրադարձության մեջ փնտրում եմ իմաստ, գաղափար ու դրանք արտացոլում կտավներում»:

Հատկապես հետաքրքրական ու անսովոր ձեռագրով է հարուստ «Խորհրդավոր ընթրիք» ստեղծագործությունը: Այս կտավում նկարչի մոտեցումն ու լուծումն այլ են, ասես վրձնի հարվածով ավելի է ընդգծում սեփական անձի յուրահատկությունն ու նկարչի անհատականությունը:

Այժմ Մորյանն աղում է Բաթումի քաղաքում, ունեցել է անհատական ցուցահանդեսներ Մոսկվայում ու Երեւանում, խմբակային ցուցադրություններ բազմաթիվ երկրներում: Սակայն կարեւորը դա չէ: Արվեստագետի համար կարեւորն այն է, երբ հասկանում ու գնահատում են իր արվեստը: Խոսքը արվեստագետների, երգահանների կամ երաժիշտների մասին չէ, այլ հայ հանդիսատեսի, ովքեր չեն ընթրնում կերպարների խորությունն ու իմաստը:

«Ինձ այստեղ չեն հասկանում: Ամեն անգամ այս խոսքերն արտահայտելիս ներսս տակնուվրա է լինում, խռովվում եմ: Մենք անընդհատ փորձում ենք դեմ գնալ, հանդիմանալ, չընդունել նորը: Կարծես վախենում ենք ազատությունից, նորամուծություններից ու նոր գաղափարներից: Իսկ արվեստագետի համար անհրաժեշտ է ընդամենը երկու բան՝ ինքնելեկտ ու ազատություն, անսահման ազատություն: Եթե որ առջեւ դնում են կաղապարներ՝ դու դառնում ես գերի: Կարծես մեր ենթագիտակցության մեջ վախ կա: Մեկ անգամ չվախեցանք ու տարանք պատմական հաղթանակ»:

Մ. Մորյանի կտավներում՝ «Այգեպան», «Կիրակի» գույները ասես ժպտում են, խաղում: Ոչ ավանդական գծերն ու ձեւերը ստեղծում են գրավիչ պատկեր, առաջին հայացքից մարդկային աչքի վրա թողնում են անսովոր, բայց նորը ու հաճելի տպավորություն:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Կարմիր սատանաներն» անհաղթահարելի պատնեշ են դարձել հայ ֆուտբոլիստների համար

ՀՀ հավաքականի անպարտելի խաղերի շարքն ընդհատվեց

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականին չհաջողվեց շարունակել չորս խաղից բաղկացած անպարտելի հանդիպումների շարքը՝ Բրյուսելում 0-3 հաշվով զիջելով Բելգիայի ընտրանուն: Ցավալին այն է, որ մոտ 60 րոպե արժանավայել խաղ ցուցադրած եւ գոլային մի քանի հիանալի պահեր ստեղծած ու ցավոք չիրացրած մեր ֆուտբոլիստները վերջին կես ժամում տեղի տվեցին: Առաջին իսկ բաց թողած գոլը մի տեսակ ընկճեց մեր ֆուտբոլիստներին, նրանք կերպարանափոխվեցին ու անճանաչելի դարձան, որի տխուր հետեւանքը դարձավ 0-3 խոշոր հաշվով կրած պարտությունը:

Վերջին հանդիպումներում ցուցադրած ագրեսիվ ու դիտարժան խաղը հայ ֆուտբոլասերներին լավատեսորեն էին տրամադրել նաեւ բելգիացիների հետ մրցավեճից առաջ: «Կարմիր սատանաներն» անցյալ տարի Երեւանում, ընտրական մրցաշարի անդրանիկ խաղում հաղթել էին 1-0 հաշվով, ուստի բնական էր սպասել, որ մեր ֆուտբոլիստները կաշխատեն ռեւանշի հասնել: Թեեւ հավաքականի կազմում բացակայում էին վնասվածք ստացած դարպասապահ Ռոման Բերեզովսկին ու որակազրկված կիսապաշտպան Համլետ Մխիթարյանը, սակայն հաստատես առաջին խաղակեսում մեր հավաքականը լավ տպավորություն թողեց եւ մոտ էր հաջողության: Հանուն արդարության պետք է նշել, որ այս անգամ, սերբերի հետ խաղի համեմատ, ավելի պասիվ էին Լեւոն Փաչաջյանն ու Սամվել Մելքոնյանը, որոնք չկարողացան իրենց ինչպես հարկն է դրսեւորել: Իսկ ահա Արտավազդ Քարամյանը բավական ագրեսիվություն դրսեւորեց եւ մի քանի անգամ սպառնաց մրցակցի դարպասին: Դեռեւս առաջին խաղակեսին բելգիացիների դարպասապահ Սթեյն Սթեյնենը ստիպված էր դրսեւորել վարպետությունը՝ հետ մղելով Արտավազդ Քարամյանի եւ Արթուր Ոսկանյանի վտանգավոր հարվածները: Մեր հավաքականը հաջողությանը մոտ էր հաստատես 37-րդ րոպեին, երբ անկյունայինի խաղարկումից հետո Արարատ Առաքելյանը գլխի հարվածով գնդակն ուղարկեց անպատսպան դարպասը, բայց վերջին պահին Գորը փակեց գնդակի ճանապարհը:

Ընդմիջումից հետո էլ գոլային նպաստավոր պահերը չիրացրին Սամվել Մելքոնյանը եւ Ռոմիկ Խաչատրյանը: Եվ այսանից հետո մեր հավաքականի դարպասապահի ու պաշտպանների ոչ հստակ խաղի հետեւանքով ընդամենը 13 րոպեում մեկը մյուսի հետեւից Սոնկը, Դեմբելեն ու Գերետսը 3 անգամ գրավեցին Կասպարովի պաշտպանած դարպասը:

Այսպիսով Հայաստանի հավաքականը զրկվեց մրցաշարային աղյուսակում բելգիացիներին շրջանցելու վերջին հնարավորությունից: Հարկ է նշել, որ «Կարմիր սատանաներն» անհարմար մրցակից են դարձել մեր ֆուտբոլիստների համար: Մինչ օրս անցկացված չորս հանդիպումներում մեր ֆուտբոլիստներին չի հաջողվել գեթ մեկ անգամ գրավել բելգիացիների դարպասը: Հիշեցնենք, որ ՀՀ հավաքականը բելգիացիներին պարտվել էր նաեւ Եվրո-96-ի ընտրական մրցաշարի երկու հանդիպումներում: 1994-ի սեպտեմբերի 7-ին Բրյուսելում կայացած ընտրական խաղում դաշտի տերերը հաղթել էին 2-0 հաշվով: Դա Հայաստանի հավաքականի պաշտոնական անդրանիկ հանդիպումն էր իր պատմության մեջ: Ոտիդ մեկ ամիս անց Երեւանում կայացած պատասխան խաղում բելգիացիները հայերին հաղթել են ընդհանուր 8-0 հաշվով:

Մրցաշարային աղյուսակ

«A» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Լեհաստան	12	7	3	2	20-10	24
2. Պորտուգալիա	12	6	5	1	23-10	23
3. Սերբիա	12	5	5	2	19-9	20
4. Ֆինլանդիա	12	5	5	2	11-6	20
5. Բելգիա	12	4	3	5	13-14	15
6. Հայաստան	10	2	3	5	4-11	9
7. Ղազախստան	12	1	4	7	10-20	7
8. Ադրբեջան	10	1	2	7	5-25	5

Երիտասարդներն էլ անհաջողության մատնվեցին

Անհաջողության մատնվեց նաեւ ֆուտբոլի երիտասարդական հավաքականը: Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի հերթական խաղում Վարուժան Սուքիասյանի սաները Չեխիայում 0-3 հաշվով զիջեցին դաշտի տերերին: Հիշեցնենք, որ Երեւանում գրանցվել էր ոչ-ոքի (1-1): Ընտրական 2-րդ խմբում կայացած մյուս խաղում Լիխտենշտեյնի հավաքականը սեփական հարկի տակ 1-3 հաշվով զիջեց ուկրաինացիներին:

Ընտրական հաջորդ հանդիպումը ՀՀ հավաքականը կանցկացնի նոյեմբերի 20-ին, Լիխտենշտեյնում: Իսկ կանցկացնի նոյեմբերի 20-ին, Լիխտենշտեյնում: Իսկ հաջորդ տարի մեր ֆուտբոլիստներին սպասում են ընտրական մրցախաղեր Թուրքիայի հավաքականի հետ: Օգոստոսի 20-ին հայ ֆուտբոլիստները Երեւանում կհյուրընկալեն թուրքերին, իսկ սեպտեմբերի 10-ին պատասխան հանդիպումը կանցկացնեն մրցակցի դաշտում:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Չեխիա	4	3	1	0	16-1	10
2. Թուրքիա	3	3	0	0	7-3	9
3. Ուկրաինա	5	3	0	2	10-5	9
4. Հայաստան	5	1	1	3	2-10	4
5. Լիխտենշտեյն	5	0	0	5	3-19	0

Չիգլերը երկու ռեկորդ սահմանեց

Գերմանիայի Էսեն քաղաքում անցկացված լողի մրցումներում ամերիկուհի Զեյթ Չիգլերը 800 մ ազատ լողաոճում գերազանցեց իր իսկ համաշխարհային ռեկորդը (8 րոպե 8 վրկ.): Նախկին ռեկորդը պատկանում էր ֆրանսուհի Լորա Մանոդին (8 րոպե 11,25 վրկ.), որը սահմանվել էր 2005-ի դեկտեմբերին: Այդ մրցումներում Չիգլերը եւ մեկ համաշխարհային ռեկորդ սահմանեց 1500 մ մրցաշարածությունում:

Ֆուտբոլը չնչում է սահմանները

Ավստրիան ու Շվեյցարիան համաձայնագիր են կնքել, որով Եվրոպայի առաջնության ժամանակ ֆուտբոլասերների եւ մրցումների պաշտոնական հյուրերի համար զգալիորեն պարզեցվում է մուտքի թույլտվություն ստանալու կարգը: Քանի որ Շվեյցարիան Շենգենյան համաձայնագրի անդամ չէ, ուստի նախկինում այդ երկիր եւ Ավստրիա մուտք գործելու համար անհրաժեշտ էր դիմել երկու երկրներին էլ եւ մուտքի թույլտվություն ստանալ: Այժմ կնքված համաձայնագիրը հնարավորություն է ընձեռում Շվեյցարիայի եւ Ավստրիայի սահմանները հատելու ընդամենը մեկ մուտքի թույլտվության առկայության դեպքում: Որպեսզի այն ձեռք բերվի, անհրաժեշտ է համապատասխան փաստաթղթերն ուղարկել ավստրիական դեսպանատուն: Իսկ շվեյցարական իշխանություններն այդ ժամանակ կստուգեն, թե արդյոք չկան երկիր մուտք գործելուն խոչընդոտող պատճառներ: Եթե ամեն ինչ կարգին է, ապա Շենգենյան մուտքի թույլտվություն ունեցողի փաստաթղթերում Եվրո-2008-ի լրացուցիչ կնիք կդրվի, ինչը հնարավորություն կընձեռի ազատորեն հատելու երկու երկրների սահմանները:

Հայազգի ըմբիշի հաջողությունը

Հայազգի ըմբիշ Վարդերես Սամուրաշեւը հաղթող է ճանաչվել Հնդկաստանի Հայդարաբադ քաղաքում անցկացված զինված ուժերի համաշխարհային 4-րդ խաղերում: Հունահռոմեական ոճի ըմբիշը, որ բնակվում է Ռոստովում, Հնդկաստանում չորս գոտեմարտ անցկացրեց: Առաջինում Սիդնեյի օլիմպիական խաղերի չեմպիոնը հաղթեց Վիետնամի ըմբիշ Նգույան Վան Բինխին, ապա պարտության մատնեց լեհ Յուլիան Կվիտին: Երրորդ գոտեմարտում նրա մրցակիցն ուկրաինացի Դմիտրի Պուշկովն էր, որին հաղթելով էլ Վարդերեսը մտավ եզրափակիչ: Այստեղ նա առավելության հասավ իրանցի ըմբիշ Մեհդի Մոհամադիի նկատմամբ եւ մինչեւ 74 կգ քաշային կարգում նվաճեց ոսկե մեդալ:

ԸՆՏՐԱԿԱՆ ՄՐՑԱՇՐՋԱՆ

Երեք հավաքականներ եզրափակիչի ուղեգիր նվաճեցին

Ֆուտբոլի Եվրոպայի 2008 թ. առաջնության ընտրական մրցաշարի հերթական տուրն անվանեց եզրափակիչ փուլի եւ երեք մասնակցի: Գերմանիայի հավաքականից հետո Եվրոպայի առաջնությունում հանդես գալու իրավունք նվաճեցին Չեխիայի, Հունաստանի եւ Ռումինիայի ընտրանիները:

Ընտրական «A» խմբում, որտեղ հանդես է գալիս Հայաստանի հավաքականը, բավական թեժ մրցապայքար է ծավալվել եզրափակիչի երկու ուղեգրերի համար, որոնց հավակնում են չորս հավաքականներ: Այդ պայքարում եւ մեկ կարետտ քայլ կատարեցին Պորտուգալիայի եւ Սերբիայի հավաքականները: Պորտուգալացիները բավական դժվարին պայքարում կարողացան Ալմա Աթիում 2-1 հաշվով հաղթել ղազախներին: Ամեն ինչ վճռվեց խաղի վերջին 10 րոպեներին: Միայն 84-րդ րոպեին պորտուգալացի Մակուկուլան բացեց հաշիվը, իսկ ավելացված ժամանակի առաջին րոպեին Ռոնալդուն երկրորդ գոլը խփեց: Չորս րոպե անց Բյակովը կրճատեց հաշվի տարբերությունը: Իսկ ահա սերբերը Բաքվում պարզապես ջախջախեցին ադրբեջանցիներին՝ 6-1:

«A» խմբում ավարտական երկու տուրերից առաջ բավական հետաքրքրական իրավիճակ է ստեղծվել: Աղյուսակը 24 միավորով գլխավորող լեհերը կարող են ուղեգրի հարցն իրենց օգտին վճռել արդեն նոյեմբերի 17-ին, եթե սեփական հարկի տակ հաղթեն բելգիացիներին: Պորտուգալացիների հնարավորություններն էլ գերադասելի են՝ հաշվի առնելով, որ սեփական հարկի տակ հյուրընկալելու են Հայաստանի եւ Ֆինլանդիայի հավաքականներին: Ճիշտ է, սերբերն էլ իրենց հերթին սեփական դաշտում կմրցեն ղազախների ու լեհերի հետ: Ընդ որում, եթե լեհերը հաղթեն բելգիացիներին, ապա սերբերի հետ հանդիպումը նրանց համար արդեն ոչ մի նշանակություն չի ունենա: Իսկ ֆիններն սեփական հարկի տակ խաղալու են ադրբեջանցիների հետ: Մի խոսքով, այս խմբում չափազանց հետաքրքրական վերջաբան է սպասվում:

Տուրի ամենաանսպասելի հաշիվը գրանցվեց Գերմանիա-Չեխիա մրցախաղում, որտեղ հյուրերը 3-0 հաշվով հաղթանակ տոնելով, դաշտի տերերից հետո «D» խմբում 2-րդ ուղեգիրը նվաճեցին: «G» խմբում հանդես եկող ռումինացիների համար դժվար չէր հյուրընկալվելիս Լյուքսեմբուրգի հավաքականի նկատմամբ հաղթանակ տոնել (2-0), որի շնորհիվ վաստակեցին 26 միավոր եւ նվաճեցին եզրափակիչի ուղեգիրը:

Դրամատիկ պայքարում անցավ Ռուսաստանի եւ Անգլիայի հավաքականների մրցավեճը: Առաջին խաղակեսում Ուեյն Ռունին գեղեցիկ հարվածով առաջ մղեց անգլիացիներին: Սակայն ընդմիջումից հետո ռուսներին հաջողվեց բեկում մտցնել մրցակցությունում եւ կամային հաղթանակ տոնել (2-1): Հանդիպման հերոսը Ռոման Պավլյուչենկոն էր, որը փոխարինման դուրս գալով, դարձավ 2 վճռորոշ գոլերի հեղինակ: ՌԴ հավաքականին հաջողվեց ընդհատել անգլիացիների 5 անընդմեջ հաղթանակների շարքը: Այժմ ընտրական «E» խմբում ռուսները 10 խաղից հետո ունեն 21 միավոր եւ ընթանում են 3-րդ տեղում: Նրանք երկու խաղ պետք է անցկացնեն մրցակիցների՝ Իսրայելի եւ Անդորրայի խաղադաշտերում: 23 միավոր ունեցող անգլիացիներին մեկ խաղ է մնացել: Նոյեմբերի 21-ին նրանք հյուրընկալելու են խմբի առաջատար խորվաթներին (26 միավոր), որոնք մինչ այդ չորս օր առաջ ուժերը կչափեն մակեդոնացիների հետ:

Անակնկալ մատուցեց Վրաստանի հավաքականը՝ Թբիլիսիում 2-0 հաշվով առավելության հասնելով «B» խմբի առաջատար շոտլանդացիների նկատմամբ: Վերջիններիս անհաջողությունից օգտվեցին ֆրանսիացիները, որոնք շնորհիվ Թյերի Անրիի 2 գոլերի հաղթեցին լիտվացիներին (2-0): Անրին դարձավ Ֆրանսիայի հավաքականի պատմության մեջ լավագույն ռմբարկուն (43 գոլ)՝ երկու գնդակով գերազանցելով աշխարհահռչակ Միշել Պլատինիի ռեկորդային ցուցանիշը: Ֆրանսիայի հավաքականն ունի 25 միավոր, մեկ միավոր պակաս է վաստակել Շոտլանդիայի ընտրանին: Իտալացիները վաստակել են 23 միավոր, սակայն մեկ խաղ պակաս են անցկացրել: Վճռորոշ կլինեն հաստատես Շոտլանդիա-Իտալիա, Ուկրաինա-Ֆրանսիա եւ Իտալիա-Ֆարերներ հանդիպումները:

Անակնկալների շարքին պետք է դասել Լիխտենշտեյնի հաղթանակը իսլանդացիների նկատմամբ (3-0): Լիխտենշտեյնի հավաքականն իր պատմության մեջ Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարերում ամենախոշոր հաշվով հաղթանակը տոնեց:

Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը պաշտպանելու հնարավորություն ստացավ գործող չեմպիոնը՝ Հունաստանի հավաքականը, որը հյուրընկալվելիս 1-0 հաշվով հաղթեց թուրքերին: Վերջիններիս շրջանցեցին նորվեգացիները՝ հյուրընկալվելիս 2-0 հաշվով հաղթելով բոսնիացիներին: Նորվեգացիները 2 միավորով գերազանցում են թուրքերին: Վճռորոշ կլինեն «C» խմբի ավարտական տուրի հետեւյալ խաղերը՝ Նորվեգիա-Թուրքիա, Թուրքիա-Բոսնիա, Մալթա-Նորվեգիա:

Շվեդները հնարավորություն ունեին ժամկետից շուտ ուղեգիր նվաճելու, սակայն սեփական հարկի տակ չկարողացան հաղթել հյուսիսային Իռլանդիայի հավաքականին (1-1): Ուղեգրի նվաճման հարցում լուրջ քայլ կատարեցին հոլանդացիները՝ հաղթելով Սլովենիայի ընտրանուն (2-0): «G» խմբում հոլանդացիները վաստակել են 23 միավոր եւ չորս միավորով առաջ անցել բուլղարացիներից, որոնք Ալբանիայում ոչ-ոքի խաղացին (1-1): Նոյեմբերի 17-ին Հոլանդիայի հավաքականը հյուրընկալելու է խմբի հետնապահ Լյուքսեմբուրգի ընտրանուն եւ հաղթանակի դեպքում կնվաճի եզրափակիչի ուղեգիրը: Այդ օրը բուլղարացիները հյուրընկալելու են խմբի առաջատար ռումինացիներին:

Ընտրական մրցաշարի մյուս խաղերում հետեւյալ արդյունքներն են գրանցվել. Ուկրաինա-Ֆարերներ՝ 5-0, Մալթա-Մոլդովա՝ 2-3, Իռլանդիա-Կիպրոս՝ 1-1, Սան Մարինո-Ուելս՝ 1-2, Մակեդոնիա-Անդորրա՝ 3-0, Դանիա-Լատվիա՝ 3-1:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ-ՄԲԱՇՁԲ-07/290 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ Լոռու մարզում 2007թ. պետական բյուջեով իրականացվող Վանաձոր քաղաքի բազմաբնակարան շենքերի բակերի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 300 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինինվեստբանկ» էջեբունու մասնաճյուղ «Բեջ-Գալ» ՍՊ ընկերության N 247230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-27, հանձնաժողովի քարտուղար Ս. Գետոյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 14.30-ն:

EUROPEAN UNION
Delegation of the European Commission
to Armenia

VACANCY: ASSISTANT ACCOUNTANT ARMENIA

The EC Delegation in Armenia is recruiting an assistant accountant to reinforce its team. The candidate shall be also in charge of various tasks in the administrative field.

REFERENCE:	32464 (please quote the reference number in your application)
REQUIREMENTS	University degree and/or diploma/certificate in the field of accounting and fiscal matters 3 years minimum experience in accounting matters and administrative management Knowledge of accounting and payment procedures Fluent English and Armenian Russian and French would be an asset
DESCRIPTION OF THE TASKS	to assist the HoA in the preparation of the annual budget. To maintain the implementation of the Budget according to Headquarters rules to proceed to payments in an ad hoc computerized system (this includes the examination of invoices and their timely and accurate payment) to assist in inventory operation to liaise with providers to prepare purchase orders

Please send your CV and a motivation letter in English language by 02 November 2007 to:

European Commission
Delegation to Armenia
12/6 Aiguestan
Yerevan, Armenia
Fax: (+ 374 1) 577 185 E-mail: *delegation-armenia@ec.europa.eu*

Due to the large amount of applications expected, we will only be able to notify you, if you have been selected for the English language interview. Interviews will be taking place in Yerevan between 05.11 and 09.11.07.
We are looking forward to your application.

www.azg.am

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ԳՀԱՊՁԲ-07/68» ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **«ՀՀ Երեւան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին աստյանի դատարանի կարիքների համար գույքի ձեռքբերման» գնման պայմանագիր կնքելու նպատակով:** Գնանշման հարցման հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 700 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինինվեստբանկ», «Բեջ-գալ» ՍՊԸ -ի 247230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ գնանշման հարցման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 16.00:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ԳՀԱՇՁԲ-07/50» ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար ՀՀ 2008թ. պետական բյուջեում ընդգրկվելիք աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման եւ փորձաքննության անցկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 800 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինինվեստբանկ», Երեւանի մասնաճյուղ, «Բեջ-գալ» ՍՊԸ-ի N 247230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Գ. Մարտիրոսյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ գնանշման հարցման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 10.00-ն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ-ԳՀԱՇՁԲ-07/51 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ Լոռու մարզում 2007թ. պետական բյուջեով իրականացվող «Գյուղական բնակավայրերում անօթեւան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարություն» ծրագրի շրջանակներում Արեւաշող գյուղում բնակարանային շինարարության աշխատանքների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 600 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինինվեստբանկ» Երեւանի մասնաճյուղ «Բեջ-Գալ» ՍՊ ընկերության N 247230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-27, հանձնաժողովի քարտուղար Ս. Գետրգյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 14.40-ն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ՄԲԱՇՁԲ-07/288» ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունիի սելավատարի պատի վերականգնման, Ն. Գետաշենում Արգիճի գետի հունի ամրակայման եւ Արծվանիստի ջրահավաք ավազանի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 1600 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինինվեստբանկ», Երեւանի մասնաճյուղ, «Բեջ-գալ» ՍՊԸ-ի N 247230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Գ. Մարտիրոսյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 12.00-ն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ-ՄԲԱՇՁԲ-07/289 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ Արարատի մարզպետարանի կարիքների համար Մրգավետ - Մխչյան - Արաքսավան - Դիմիտրով ոռոգման ջրագծի կառուցում աշխատանքների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 4700 ՀՀ դրամ փոխանցել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի N 1150000088680300 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Հ. Ավետիսյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ն:

armentel

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

«Արմենտել» ՓԲԸ դիմել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ Կոտայքի մարզում (Պտղնի), Շիրակի մարզում (Գյուլիքուպաղ, Լուսակերտ, Սղանդարյան), Լոռու մարզում (Լեռնոտով, Ձաջուտ, Սարահարթ, Ջրաբեռ), Արագածոտնի մարզում (Օշական) CDMA ցանցի միջոցով ֆիքսված հեռախոսակապի կազմակերպման նպատակով Tx/Rx 463,975/453,975; 465,225/455,225; 466,475/456,475 ՄՀց (3 հաղորդման/ 3 ընդունման) ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն ստանալու համար:

Արմենիա Տելեֆոն Կոմպանի

Eurasia Foundation

«Կազմակերպական կարողությունների զարգացում» ծրագրի մասնակցության հրավեր

Եվրասիա հիմնադրամը հրավիրում է հայաստանյան հասարակական կազմակերպություններին մասնակցելու «Կազմակերպական կարողությունների զարգացման» ծրագրին:

Ծրագրի նպատակն է զարգացնել հասարակական կազմակերպությունների կազմակերպական կարողությունները՝ գործունեության արդյունավետությունը բարձրացնելու եւ ծառայությունների մատուցման որակը բարելավելու համար:

Կարող է մասնակցել

- Ցանկացած հասարակական կազմակերպություն, որը նվազագույնը հինգ տարի գրանցված է որպես իրավաբանական անձ եւ ակտիվ գործունեություն է ծավալում:

Անհատները չեն կարող դիմել:

Դիմող կազմակերպության հիմնադիրները եւ/կամ ղեկավարները չեն կարող լինել պետական կառավարման մարմինների, քաղաքական կուսակցությունների կամ կրոնական կազմակերպությունների ղեկավարներ կամ ներկայացուցիչներ:

Ընտրության չափանիշները

Դիմող կազմակերպությունները պետք է պատրաստեն մասնակցության հայտերը /նամակները/ եւ Եվրասիա հիմնադրամ ներկայացնեն երեք շաբաթվա ընթացքում: Կազմակերպությունների ընտրությունը կատարվելու է ելնելով հետեւյալ չափանիշներից.

- կազմակերպությունն ունի կարողություն՝ գործողությունների պլանն իրականացնելու համար,
- կազմակերպությունը պատրաստ է փոփոխություններ կատարել՝ իր գործունեությունը բարելավելու նպատակով,
- կազմակերպությունը զգալի ներդումներ է կատարել իր գործունեության ոլորտում,
- կազմակերպությունն ունի ներուժ եւ ցանկություն՝ ֆինանսապես կայուն դառնալու համար,
- կազմակերպությանն անհրաժեշտ է մասնակցել «Կազմակերպական կարողությունների զարգացման» ծրագրին,
- հայտը/նամակը համապատասխանում է ծրագրի նպատակներին եւ խնդիրներին,
- հայտը/նամակը հստակ շարադրված է:

«Կազմակերպական կարողությունների զարգացման» ծրագրի մասնակցության հրավերը կարող եք ստանալ հետեւյալ վեբ կայքերից՝ ***www.eurasia.am, www.careercenter.am,*** որ մանրամասն շարադրված են ծրագրի քայլերը, հայտի/նամակի ձեւը, անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, որոնք պետք է կցել հայտին/նամակին, ընտրության չափանիշները եւ այլն:

Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետն է **2007 թ-ի հոկտեմբերի 29-ը:**

Հոկտեմբերի 23-ին, ժամը 15:00-ին Եվրասիա հիմնադրամը դիմող կազմակերպությունների համար կազմակերպելու է տեղեկատվական սեմինար, որը տեղի կունենա Եվրասիա հիմնադրամի գրասենյակում (հասցե՝ Զարոբյան 56):

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ծրագրի համակարգող Սարգսյան Քրիստինեին 586095 եւ 586159 հեռախոսահամարներով կամ ***skristine@eurasia.am*** էլեկտրոնային փոստով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի պարի պետական անսամբլը հայտարարում է տղա պարողների մրցույթ: Դիմումներն ընդունվում են մինչեւ հոկտեմբերի 25-ը: Հասցե՝ Մաշտոցի 46, հեռ. 58-14-26:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 19-ին եւ 20-ին Երեւանում կանցկացվի սլովակ-հայ-արցախյան **գործարարների ֆորումը,** կազմակերպված Սլովակիայի հայկական համայնքի, Զարգացման ու ներդումների գործակալության եւ Հայկական զարգացման գործակալության կողմից: Ֆորումի աշխատանքային ոլորտներն են. էներգետիկա (փոքր ՀԷԿ-երի կառուցում եւ ֆինանսավորում), բանկեր եւ աղահովագրություն, սննդամթերք եւ կախույթ /փայտեպատտիաններ- ֆինանսավորում 5 տարի հետաձգման պայմանով /, սանտեխնիկա, շին. նյութեր, առողջապահություն /տեխնիկա, տեխնոլոգիաներ/ կապ, տելեկոմունիկացիա եւ ճանապարհային ավտոմատիկա, օդորակման համակարգեր / ֆինանսավորում 5 տարի հետո վճարման պայմանով / եւ այլ ոլորտի ֆիրմաներ:

Բոլոր գործարքները կֆինանսավորվեն 5-15 տարի ժամանակով, տարեկան 8.5-9%:

Գործարար ֆորումի բացումը տեղի կունենա հոկտեմբերի 19-ին, ժամը 11:00-ին ԳԱԱ դահլիճում:

ՕՐԱԹԵՐԹ ՀԱՄԱՐ ՅԱՆԵՑԱՇԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Ասեղիճան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 18.10.2007, գինը՝ 100 դրամ, տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: